

# ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՏՔ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### Նախարար

Ռնդիանուր դրույթներ

Սեփականության իրավունքի ձեռքբերման և օտարման հիմքերը

Սեփականության իրավունքի պաշտպանությունը

Վարձակալության իրավունք

Ժամանակագրության իրավունք

Հավելված 1.

Քաղվածք »Պետական տուրքի մասին« ՀՀ օրենքից

Հավելված 2.

Քաղվածք »Պետական տուրքի մասին« ՀՀ օրենքից

## Նախարար

Ներկայացվող գրքույկը Ընտանեկան հանրամատչելի իրավաբանական գրադարանի հերթական թողարկումն է: Այս գրքույկը նվիրված է սեփականության իրավունքին: Դրանում տեղ են գտնել սեփականության իրավունքի վնրաբերյալ քաղաքացիներին առավել հոգող հարցերի պատասխանները: Մեր նպատակն է քաղաքացիներին տեղեկացնել իրենց իրավունքների մասին և դրանով նպաստել դրանց պաշտպանությանը:

Սեփականության իրավունքը՝ դա քաղաքացու իրավունքն է իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը: Ինչպես տեսնում ենք, սեփականության իրավունքը երեք տարրեր իրավունքների ամբողջությունն է, որոնցից յուրաքանչյուրին մենք առանձին կանորադառնանք սույն գրքույկի «Ընդհանուր դրույթներ» բաժնում:

Օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավագործությունները սեփականատերն իրականացնում է իր հայեցողությամբ: Նա կարող է ժամանակավորապես այդ իրավագործությունների մի մասը փոխանցել ուրիշի և դարձյալ մնալ որպես սեփականատեր: Բացի դրանից, հնարավոր են նաև դեպքեր, երբ սեփականատերը ժամանակավորապես զրկված լինի այդ բոլոր իրավագործություններից: Օրինակ, երբ գույքը գտնվում է արգելանքի տակ, սեփականատերն իրավունք չունի այդ գույքը օգտագործել: Զնայած դրան, սեփականատերը մնում է որպես այդպիսին, որովհետև արգելանքի վնրաբերյալ որոշումը վնրացնելուց հետո, եթե այդ գույքը չի բռնագրավվում, այն պետք է վնրադարձվի սեփականատիրոջը:

Անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ սեփականատերը գույքը տիրապետում, օգտագործում և տնօրինում է այնքանով, որքանով այն՝ 1) չի հակասում օրենքին և իրավական այլ ակտերի և 2) չի խախտում այլ անձանց, հանրության և պետության օրենքով պահպանվող իրավունքները: Եթե նույնիսկ սեփականատիրոջ կողմից գույքի տիրապետման, օգտագործման և տնօրինման գործողությունները չեն հակասում օրենքին կամ իրավական այլ ակտերի, սակայն

Խախտում են այլ անձանց օրինական իրավունքները, ապա նա պետք է վերացնի նման խախտումները:

## § 1. Ընդհանուր դրույթներ

### **1.1. Ի՞նչ է նշանակում տիրապետման իրավունք**

Ինչպես արդեն ասվեց, սեփականության իրավունքը կազմված է երեք տարբեր իրավունքների՝ տիրապետման, օգտագործման և տնօրինման համակցությունից:

Տիրապետումը՝ գույքը փաստացի, այսինքն՝ ֆիզիկապես տիրելու իրավաբանորեն ապահոված հնարավորությունն է, գույքի գտնվելն է սեփականատիրոջ տնտեսությունում, նրա փաստացի տնտեսական իշխանության ներքո: Այս իրավունքը, նաև և առաջ, և շատ հաճախ պատկանում է գույքի սեփականատիրոջը: Սակայն գույքը կարող են տիրապետել նաև վարձականները, գույքն անհատույց օգտագործողները, գույքը գտած անձինք, ինչպես նաև այն անձինք, որոնց մոտ գույքը հայտնվել է անկախ սեփականատիրոջ կամքից, օրենքի կամ վարչական ակտի հիման վրա:

Սեփականատիրոջ տիրապետումը համարվում է տիտղոսային տիրապետում, այսինքն՝ այն իրականացվում է օրենքի հիման վրա, օրինական է: Բացի սեփականատիրոջից, տիտղոսային տիրապետում կարող են իրականացնել նաև ոչ սեփականատիրոջները: Այդպիսի դեպքերում ոչ սեփականատիրոջ տիրապետման հիմքում պետք է ընկած լինի օրենքը, վարչական ակտը կամ պայմանագիրը: Օրինակ, գտնված իրը պետք է հանձնվի ուստիկանությանը կամ տեղական ինքնակառավարման մարմնին: Եթե այդ իրը գտնվում է ուստիկանությունում կամ զյուղապետարանում, ապա այդ մարմինները հանդեն են զալիս որպես տիրապետողներ, բայց սեփականատիր չեն:

Եթե սեփականատիրը պայմանագրով իր գույքը ժամանակավոր օգտագործման համար տալիս է մեկ ուրիշի, ապա օգտագործողն այդ գույքի նկատմամբ իրականացնում է տիտղոսային տիրապետում, որովհետև դրա հիմքում ընկած է պայմանագիրը:

Հնարավոր են այնպիսի դեպքեր, եթե գույքը որևէ մեկի տիրապետման ներքո գտնվի առանց օրինական հիմքի: Օրինակ, քաղաքացին գտնլ է որևէ իր և այն պահում է իր մոտ: Նշանակում է՝ այդ իրը գտնվում է նրա տիրապետման ներքո, բայց այդ տիրապետումն իր հիմքում օրինական ոչինչ չունի, այդ իսկ

պատճառով այն տիտղոսային չէ, ուստի չի պաշտպանվում: Այլ կերպ ասած՝ եթե իրը գտնողը զրկվի այդ իրավունքից, նա չի կարող պաշտպանություն հայցնել: Ասվածը վերաբերում է նաև գողացված, հափշտակված իրը տիրապետողին:

## 1.2. Ի՞նչ է նշանակում օգտագործման իրավունք

Օգտագործման իրավունքի էությունը կայանում է նրանում, որ գույքն իր սոցիալ-տնտեսական նշանակությամբ ծառայեցնելու միջոցով տիրապետողները դրանից ստանում են արտադրական, կենցաղային, մշակութային և այլ պահանջմունքների բավարարում, տարբեր տեսակի օգուտներ, պտուղներ և եկամուտներ: Ուրեմն, օգտագործման իրավունքը գույքից դրա օգտակար բնական հատկությունները բաղելու, ինչպես նաև դրանից օգուտ ստանալու իրավաբանորեն ապահոված հնարավորությունն է, այսինքն՝ այդ հնարավորությունը պետք է հիմնավորված լինի օրենքով կամ իրավական այլ ակտով:

Այդ իրավունքը նույնպես սովորաբար պատկանում է գույքի սեփականատիրոջը: Բայց օգտագործման իրավունքը կարող է իրականացնել նաև ոչ սեփականատիրը: Օրինակ, գույքային վարձակալության պայմանագրով վարձակալը ոչ միայն տիրապետում, այլև օգտագործում է ուրիշի գույքը: Անկախ նրանից, թե ով է օգտագործողը, գույքը պետք է օգտագործվի իր նպատակային նշանակությամբ և օրենքով սահմանված շրջանակներում:

Օգտագործման իրավագորությունը սեփականատիրն իրականացնում է որևէ մեկից անկախ: Այն նույնպես տիրապետման նման կարող է լինել օրինական և անօրինական: Օգտագործումը օրինական է, եթե այն հիմնվում է օրենքի, վարչական ակտի, պայմանագրի վրա:

Եթե սեփականատիրն օգտագործման իրավունքը պայմանագրով փոխանցում է մեկ ուրիշի, ապա, որպես կանոն, փոխանցում է նաև տիրապետման իրավագորությունը: Բայց նա չի դադարում սեփականատիր լինելուց, քանի որ նրան է պատկանում տնօրինման իրավունքը:

## 1.3. Ի՞նչ է նշանակում տնօրինման իրավունք

Տնօրինման իրավունքը սեփականատիրոց կողմից գույքի ճակատագիրը որոշելու իրավաբանորեն ապահոված հնարավորությունն է: Այս իրավագորությունն է, որ սեփականատիրոջը հնարավորություն է տալիս նվիրել, վաճառել, գրավ դնել, ոչնչացնել կամ դնեն նետել իր գույքը: Ի տարբերություն տիրապետման և օգտագործման իրավունքի, որոնք կարող են պատկանել ինչպես գույքի սեփականատիրոջը, այնպես էլ մյուս տիրապետողներին, տնօրինման իրավունքը, որպես ընդհանուր կանոն, պատկանում է միայն սեփականատիրոջը: Այսպես, համաձայն «ՀՀ քաղ. օր. 606-րդ հոդվածի վարձակալը գույքը ստանում է «ժամանակավոր տիրապետման և (կամ) օգտագործման», այլ ոչ թե տնօրինման: Տնօրինման իրավագորությունը միայն օրենքով նախատեսված դեպքերում կարող է իրականացնել նաև ոչ

**սնիփականատերը:** Օրինակ, երբ քաղաքացին իր գույքը հաճանում է կոմիսիոն խանութ՝ վաճառքի, ապա խանութն ինքն է իրականացնում այդ գույքը տնօրինելու իրավազորությունը: Կոմիսիոն խանութի այդ իրավունքը բխում է ոչ թե սնիփականության իրավունքից, այլ օրենքից և սնիփականատիրոջ հետ կնքած պայմանագրից: Քանի որ սնիփականատերը շարունակում է մնալ որպես այդպիսին, և իրավունք ունի մինչև կոմիսիոն խանութի կողմից գույքը վաճառելն այն հետ վերցնել:

Տրանսպորտի մասին օրենսդրությունը նախատեսում է մի քանի դեպքեր, երբ գույքի տնօրինման իրավունքն իրականացնում է տրանսպորտային կազմակերպությունը: Օրինակ, երբ քաղաքացին իր ուղերենը ժամանակին չի պահանջում երկաթուղուց, կամ երբ բնոր ստացող կազմակերպությունը երկաթուղային կազմակերպությունից բնոր ժամանակին չի ընդունում, վերջինս կարող է այն վաճառել:

Դատական ակտերի հարկադիր կատարողը դատարանի վճի հիման վրա իրավունք ունի սնիփականատիրոջ գույքը վաճառել:

#### **1.4. Սնիփականության իրավունքի պաշտպանության ինչպի՞սի սահմանադրական երաշխիքներ գոյություն ունեն**

Որպես մարդու և քաղաքացու կարևորագույն իրավունք՝ սնիփականության իրավունքն իր արտահայտությունն է գտնի ՀՀ Սահմանադրության մեջ: Հայաստանում սնիփականության իրավական ռեժիմը սահմանող սահմանադրական նորմերն ամրագրված են ՀՀ Սահմանադրության 8-րդ և 28-րդ հոդվածներում: Ինչո՞ւ ենք անդրադառնում սնիփականության պաշտպանության սահմանադրական նորմերին: Նախ, որպեսզի ընթացը տևյալ լինի, որ իր սնիփականության իրավունքն ու դրա պաշտպանությունը, որպես պետության կարևորագույն խնդիր, ամրագրված են պետության հիմնական օրենքում, որն ոնի բարձրագույն իրավաբանական ուժ: Երկրորդը, որն անմիջականորեն բխում է առաջինից, սնիփականության իրավունքին վերաբերող մյուս բոլոր իրավական ակտերում ամրագրված նորմերը պետք է բխեն Սահմանադրության նորմերից և համապատասխանեն դրանց:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի, «Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սնիփականության իրավունքը»:

Սնիփականատերն իր հայեցողությամբ տիրապետում, օգտագործում և տնօրինում է իրեն պատկանող գույքը: Սնիփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը:

Պետությունը երաշխավորում է սնիփականության բոլոր ձևերի ազատ զարգացումը և հավասար իրավական պաշտպանությունը, տնտեսական զործունեության ազատությունը, ազատ տնտեսական մրցակցությունը»:

Սահմանադրության այս դրույթը գրեթե նույնությամբ արտացոլվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքում:

Այս նորմի նշանակությունը կարևորվում է նաև նրանով, որ այն հավասար իրավական ռեժիմ է սահմանում սեփականության բոլոր ձևերի համար: Սեփականության պետական և համայնքային ձևերը մասնավոր սեփականության համեմատությամբ իրավական պաշտպանության առումով ոչ մի առավելություն չունեն և չեն ել կարող ունենալ: Սրանով է ՀՀ ներկա Սահմանադրությունն սկզբունքորեն տարբերվում է Հայաստանի նախորդ սահմանադրություններից, որոնք ամրագրում են սոցիալիստական սեփականության և տնտեսավարման սոցիալիստական համակարգի անսասանությունը:

Սեփականության իրավունքի ամրապնդման առումով կարևոր նշանակություն ունի ՀՀ Սահմանադրության 28-րդ հոդվածը, որը սահմանում է. «Յուրաքանչյուր որ ունի սեփականության և ժառանգման իրավունք: Հողի սեփականության իրավունքից չեն օգտվում օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Սեփականությունից կարող է զրկել միայն դատարանը՝ օրենքով նախատեսված դեպքերում:»

Սեփականության օտարումը հասարակության և պետության կարիքների համար կարող է կատարվել միայն բացառիկ դեպքերում, օրենքի հիման վրա՝ նախնական համարժեք փոխառուցմամբ»:

Այսպիսով, գույքի նկատմամբ սեփականության իրավունքի դադարեցումը հնարավոր է միայն դատարանի վճռով (օրինակ, եթե այն օտարվում է պետական կարիքների համար), կամ դատավճռով (իբրև պատիժ հանցագործության կատարման համար, եթե դատապարտյալի սեփականությունը կազմող գույքը կամ դրա մի մասը հարկադրաբար և անվճար վերցվում է որպես պետության սեփականություն):

Սահմանադրության 28-րդ հոդվածի նրկորդ մասը բովանդակում է մասնավոր սեփականության իրավունքի ևս մեկ կարևոր նրաշխիք: Հասարակության և պետության կարիքների համար գույքի հարկադրի օտարումը կարող է կատարվել միայն բացառիկ դեպքերում, օրենքի հիման վրա՝ նախնական և համարժեք փոխառուցմամբ: Սեփականությունից զրկվող անձին վճարվում է գույքի օտարման պահին նրա շուկայական արժեքին համապատասխան փոխառուցում և կատարվում է վնասների լիարժեք հատուցում, եթե այդպիսիք առկա են:

## 1.5. Սեփականության իրավունքի պաշտպանության ինչպի՞սի միջազգային իրավական ակտեր գոյություն ունեն

21-րդ դարում մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում ընդհանրապես, իսկ սեփականության իրավունքի պաշտպանության բնագավառում մասնավորապես, հատուկ կարևորություն են ձեռք բերել միջազգային իրավական ակտերը: Ինչպես ամրագրված է ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 5-րդ մասում՝ «Հայաստանի Հանրապետության անունից կնքված միջազգային պայմանագրերը կիրառվում են միայն վավերացվելուց հետո: Վավերացված միջազգային պայմանագրերը Հանրապետության իրավական

համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե նրանցում սահմանված են այլ նորմներ, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են պայմանագրի նորմերը»: Այսինքն՝ իրավունքի կիրառման տեսանկյունից որևէ տարբերություն չկա, ասենք, օրինակ, «ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» դաշնագրի միջև, և «ՀՀ քաղաքացին իր իրավունքները պաշտպանելիս հավասարապես կարող է հենվել ինչպես «ՀՀ օրենքների, այնպես էլ «ՀՀ կողմից վավերացված միջազգային իրավական փաստաթղթերի վրա: Ավելին, եթե պարզվի, որ «ՀՀ օրենքով այլ բան է նախատեսված, իսկ միջազգային իրավական ակտով մեկ այլ, ապա պաշտոնատար անձինք և պետական մարմինները պարտավոր են կիրառել, և քաղաքացին կարող է պահանջել, որպեսզի նրանք կիրառեն միջազգային իրավական փաստաթղթում ամրագրված դրույթները»:

Ըստ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին նվիրապական կոնվենցիային կից N 1 արձանագրության 1-ին հոդվածի՝ «Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ որի չի կարելի գրկել իր գույքից, բացառությամբ՝ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով»:

Նախորդ դրույթներն, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության՝ այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքին, որոնք նա անհրաժեշտ է համարում՝ իր հիմնական շահերին համապատասխան, սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի, կամ մյուս տուրքերի, կամ տուգանքների վճարումն ապահովելու համար»: Համաձայն նույն կոնվենցիայի 34 հոդվածի՝ «Դատարանը (նկատի ունի մարդու իրավունքների նվիրապական դատարանը) կարող է զանգատներ ընդունել զանկացած անձից, հասարակական կազմակերպությունից կամ անձանց խմբից, որոնք պնդում են, թե դարձել են այդ կոնվենցիայով կամ դրան կից արձանագրություններով ճանաչված իրենց իրավունքների՝ որևէ Բարձր պայմանագրովող կողմից թույլ տված խախտման գոհ: Բարձր պայմանագրովող կողմերը պարտավորվում են որևէ կերպ չխոչընդոտել այդ իրավունքի արդյունավետ իրականացմանը»: «Հիշյալ դրույթները հնարավորություն են տալիս «ՀՀ քաղաքացիներին իրենց սեփականության իրավունքները պաշտպանել ոչ միայն իրավական պաշտպանության ներպետական միջոցներով, այլև՝ միջազգային: Սեփականության իրավունքի պաշտպանության առումով վերոհիշյալ կոնվենցիան և Արձանագրությունը մյուս միջազգային իրավական փաստաթղթերից տարբերվում են նրանով, որ դրանք ոչ միայն լրացուցիչ երաշխիքներ են ստեղծում սեփականության իրավունքի իրացման և պաշտպանության համար հայաստանի Հանրապետությունում, այլև հնարավորություն են տալիս այդ իրավունքը պաշտպանել միջազգային բարձր առողջապահությանում»:

Մարդու իրավունքների համընդհանուր հոչակագրի 17-րդ հոդվածում նշված է, որ «1. Յուրաքանչյուր ոք ունի ինչպես միանձնյա, այնպես էլ այլոց հետ համատեղ սեփականություն ունենալու իրավունք :

2. Ոչ ոք չպետք է կամայականորեն գրկվի իր սեփականությունից»:

Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին 1954 թ. սեպտեմբերի 28-ի կոնվենցիայի 13-րդ հոդվածի համաձայն՝ «Պայմանագրովող պետությունները շարժական ու անշարժ գույքի ու դրան առնչվող այլ իրավունքների

ձնորբերման, ինչպես նաև վարձակալության և շարժական ու անշարժ գույքի հետ կապված այլ պայմանագրերի կապակցությամբ քաղաքացիություն չունեցող անձին հատկացնում են հնարավորինս և, ամեն դեպքում, ոչ պակաս բարեհաճ վերաբերմունք, քան նույն հանգամանքներում ընդհանրապես հատկացվում է օտարերկրացիներին»: Փաստորեն, այս կոնվենցիայի իմաստից ելնելով քաղաքացիություն չունեցող անձինք Հայաստանի Հանրապետությունում կարող են սեփականության իրավունքով ունենալ ցանկացած գույք, բացի հողից:

Նույն իմաստն է բովանդակում նաև «Փախստականների կարգավիճակի մասին» 1951 թ. հուլիսի 28-ի կոնվենցիան, որի 13-րդ հոդվածում շարադրված է հետևյալը. «Պայմանագրովող պնտությունները շարժական ու անշարժ գույքի և դրան առնչվող այլ իրավունքների ձնորբերման, ինչպես նաև վարձակալության և շարժական ու անշարժ գույքի հետ կապված այլ պայմանագրերի կապակցությամբ քաղաքացիություն չունեցող անձին հատկացնում են հնարավորինս և, ամեն դեպքում, ոչ պակաս բարեհաճ վերաբերմունք, քան նույն հանգամանքներում ընդհանրապես հատկացվում է օտարերկրացիներին»:

## **§ 2.Սեփականության իրավունքի ձեռքբերման և օտարման հիմքեր**

### **2.1. Հայաստանի Հանրապետությունում ովքե՞ր կարող են սեփականություն ունենալ (լինել սեփականության իրավունքի սուբյեկտներ)**

«Հ քաղ. օր. 166-րդ հոդվածը, թվարկելով սեփականության իրավունք սուբյեկտներին, այսինքն՝ այն անձանց, ովքեր կարող են սեփականության իրավունքով գույք ունենալ, հիշատակում է միայն ՀՀ քաղաքացիներին: Հոդվածը չի հիշատակում օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց, ինչը, սակայն, ամենևին չի նշանակում, որ նրանք չեն կարող սեփականության իրավունքով գույք ունենալ Հայաստանի Հանրապետությունում: Այդ իրավունքով նրանց օժտել է Սահմանադրության 28-րդ հոդվածը, համաձայն որի՝ «Յուրաքանչյուր ոք ունի սեփականության և ժառանգման իրավունք»: «Յուրաքանչյուր ոք» արտահայտության տակ պետք է հասկանալ ոչ միայն ՀՀ քաղաքացիներին, այլ նաև օտարերկրյա քաղաքացիներին, քաղաքացիություն չունեցող անձանց, փախստականներին և այլոց: Վերապահում է արքած միայն հողի նկատմամբ սեփականության իրավունքի կապակցությամբ:

### **2.2. Արդյո՞ք ցանկացած գույք կարող է լինել քաղաքացու սեփականությունը:**

Ոչ, գանկացած գույք չէ, որ կարող է քաղաքացուն պատկանել սեփականության իավունքով, և ընդհանրապես պատկանել նրան:

Ընդհանրապես, քաղաքացու սեփականության օբյեկտների շրջանակը շատ լայն է: Դրանց մեջ են մտնում և անշարժ ու շարժական գույքը, և դրամական միջոցները և արժեթղթերը և մտավոր գործունեության արդյունքները (մտավոր սեփականություն): Սակայն կան գույքի որոշակի տեսակներ, որոնց չի թույլատրվում քաղաքացիական շրջանառության մեջ մտցնել (շրջանառությունից հանված օբյեկտներ), կամ որոնք կարող են պատկանել միայն որոշակի անձանց, կամ կարող են շրջանառության մեջ դրվել միայն հատուկ թույլտվությամբ (սահմանափակ շրջանառու օբյեկտներ): Առաջինների թվին են դասվում պետական բացառիկ սեփականությունը հանդիսացող, երկրի ազգային հարստությունը կազմող, համապետական և պաշտպանական խնդիրների լուծման համար անհրաժեշտ հատուկ օբյեկտները, զիտատնեմիկական մշակումները, պետական արգելանոցները, արգելավայրերը և այլն: Այդ կարգի օբյեկտները, այսինքն՝ շրջանառությունից հանված օբյեկտները պետք է ուղղակիորեն նշվեն օրենքում: Երկրորդների, այսինքն՝ սահմանափակ շրջանառության օբյեկտների թվին են դասվում զենքը, զինամթերքը, պայթուցիկ, ռադիոակտիվ, թռնավոր ու հոգեներգործուն նյութերը և այլն: Դրանք ձնորբենելու և որպես սեփականություն ունենալու համար անհրաժեշտ է պետական մարմինների կողմից տրված հատուկ թույլտվություն: Ընդ որում այդ թույլտվությունը ոչ բոլորին կարող է տրվել: Առանց համապատասխան թույլտվության դրանք ձնորբենելը, պահելը, օգտագործելը կառաջացնեն համապատասխան իրավական պատասխանատվություն, հաճախ նաև՝ քրեախրավական:

### 2.3. Օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը ՀՀ-ում հողի նկատմամբ սեփականության իրավունք ունի<sup>o</sup>, թե՛ ոչ

Ենելով Հայաստանի կոնկրետ բնական պայմաններից (սակավահողություն և այլն), ՀՀ Սահմանադրության 28-րդ հոդվածն արգելում է օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց օգտվելու հողի սեփականության իրավունքից՝ քացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Վերջինս նշանակում է, որ օտարերկրյա քաղաքացիներն ու քաղաքացիություն չունեցող անձինք կարող են ունենալ հողի սեփականության իրավունք միայն այն դեպքերում, եթե օրենքն ուղղակիորեն նախատեսում է նման իրավունքի հնարավորությունն ու ծավալը:

Այսպես, համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 4-րդ հոդվածի 2-րդ կետի՝ «Հողային օրենսդրության սուբյեկտներն են՝ Հայաստանի Հանրապետությունը, համայնքները, ՀՀ և օտարերկրյա իրավաբանական անձինք և քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք, միջազգային կազմակերպությունները, կացության հատուկ կարգավիճակ ունեցող անձինք:

ՀՀ Սահմանադրությանը համապատասխան՝ օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք չեն կարող հողի նկատմամբ ունենալ

սնիփականության իրավունք: Նրանք կարող են լինել միայն հոդի օգտագործողներ:

Բացառություն են կազմում միայն Հայաստանի Հանրապետությունում կացության հատուկ կարգավիճակ ունեցող անձիք»:

## 2.4. ՈՒ՞մ սնիփականությունն է համարվում գույքի օգտագործումից ստացվածը

Համաձայն ՀՀ քաղ. օր. 144-րդ հոդվածի՝ գույքի օգտագործումից ստացված արգասիքը (պտուղը, արտադրանքը, եկամուտները) պատկանում է այդ գույքն օրինական հիմունքներով օգտագործող անձին, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով, այլ իրավական ակտերով կամ այդ գույքի օգտագործման մասին պայմանագրով: Իսկ ո՞վ է օրինական օգտագործողը: Օրինական օգտագործողն այն անձն է, ով գույքի սնիփականատիրոջ հետ պայմանագրի հիման վրա կամ օրենքի ուժով է օգտագործում որիշի գույքը: Դրանց թվին են դասվում մասնավորապես՝ վարձակալը, փոխառուն և այլոք (օր., ավտոմեքենայի վարձակալության պայմանագրի համաձայն՝ վարձակալը վարձատուին կարող է վճարել միայն վարձավճար, իսկ դրա օգտագործումից ստացված եկամուտը պահել իրեն): Ընդհանրապես, ընդհանուր կանոն է պտուղների, արտադրանքի և եկամուտների պատկանելը գույքն օրինական հիմունքներով օգտագործողին: Սակայն կոնկրետ պարագայում կարող է այն այլ կերպ սահմանվել: Օրինակ, եթե ձի է վարձակալության հանձնված, ապա պայմանագրով կարող է որոշվել, որ ձիու պտուղը պատկանելու է վարձատուին:

## 2.5. Ի՞նչ տարբերություն կա շարժական և անշարժ գույքի միջև և ինչո՞վ են տարբերվում դրանց իրավական կարգավորման ռեժիմները

Ըստ ՀՀ քաղ. օր. 134-րդ հոդվածի՝ «1.Անշարժ գույք են համարվում հոդամասները, ընդերքի մասները, մեկուսի ջրային օբյեկտները, անտառները, բազմայա տնկինները, շենքները, շինությունները և հոդին ամրակայված այլ գույքը, այսինքն՝ այն օբյեկտները, որոնք անհնարի է հոդից անջատել՝ առանց այդ գույքի նշանակությանն անհամաչափ վնաս պատճառնելու:

2. Շարժական գույք է համարվում անշարժ չհամարվող գույքը:»

Հոդվածում թվարկված անշարժ գույքի տեսակներն օրինակենի են, բայց ոչ ամբողջական: Բացի թվարկվածից, անշարժ են համարվում խողովակաշարային մայրուղիները, զազախողովակները, նավթի և զազի պահենստարանները: Մեկուսի ջրային օբյեկտներին են դասվում լճերը, արհեստական լճերը:

Հոդվածում հիշատակված շինությունները վերաբերում են գանկացած շինության, այդ թվում նաև երկաթզերին, բայց պահեստներին, էստակադաներին:

Անշարժ գույքի հետ կապված գանակացած իրավունք, այդ թվում սեփականության, օգտագործման, գրավի, հիփոթերի, սերվիտուտի և այլն, ենթակա է պարտադիր պետական գրանցման: Հակառակ դեպքում այն անվավեր կհամարվի:

Ծարժական գույքի նկատմամբ իրավունքները ենթակա են պարտադիր պետական գրանցման միայն օրենքով դրա համար հատուկ նախատեսված դեպքերում (օրինակ՝ զենք ունենալու իրավունքը):

## 2.6. Ի՞նչ է նշանակում գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում

Համաձայն ՀՀ քաղ. օր. 135-րդ հոդվածի և «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի, գույքի նկատմամբ պետական գրանցումը՝ պետական գրանցում իրականացնող մարմնի կողմից գույքի նկատմամբ սեփականության իրավունքի, օգտագործման իրավունքի, գրավի, հիփոթերի, սերվիտուտի, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում այլ իրավունքների ծագման, փոփոխման, դադարման փաստի գրանցումն է: Գույքի պետական գրանցումն ինքնանպատակ չէ: Այն արվում է պետության կողմից գույքի նկատմամբ իրավունքների ճանաչման, երաշխավորման և պաշտպանության նպատակով, գույքի և դրա նկատմամբ իրավունքների ու սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվական համակարգների ստեղծման և նման տեղեկությունների տրամադրման նպատակով: Օինակ, ուրիշ ոչ մի տեղ, ուրիշ ոչ մի պետական կամ հասարակական մարմին ձեզ չի կարող քիչ թե՛ շատ հավաստի տեղեկություններ տալ այն մասին, թե՛ այն բնակարանը, որը դուք ցանկանում եք գնել, որևէ տեղ գրավադրված է, թե՛ ոչ, կամ կալանքի տակ է, թե՛ ոչ: Նման տեղեկատվությունները կարող են տրամադրել միայն անշարժ գույքի գրանցման պետական կադաստրը: Ավելին, դրա պարտականությունն է:

Պետական գրանցումն իրականացնում է անշարժ գույքի պետական միասնական կադաստրի համակարգը, որը կազմված է ՀՀ կառավարության կողմից լիազորված պետական կառավարման հանրապետական մարմնից և նրա տարածքային ստորաբաժանումներից:

Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման պարտականությունը տարածվում է բոլորի վրա՝ ինչպես Հայաստանի Հանրապետության և համայնքների, այնպես էլ քաղաքացիների, իրավաբանական անձանց, օտարենրկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների, օտարենրկրյա իրավաբանական ու ֆիզիկական անձանց և քաղաքացիություն չունեցող անձանց վրա: Անհրաժեշտ է մշտապես հիշել, որ պետական այլ մարմիններում գույքի նկատմամբ իրավունքների գրանցումը հիմք չէ այդ գույքի նկատմամբ իրավունքների ծագման համար: Գույքի նկատմամբ իրավունքները պետք է պարտադիր գրանցվեն միայն և

բացառապես անշարժ գույքի պետական միասնական կադաստրի մարմիններում:

Կադաստրում կատարված գրանցումների մասին տեղեկություն ստանալու իրավունք ունի այդպիսին ստանալու հարցով շահագրգիռ ցանկացած սուբյեկտ: Տեղեկությունը տրամադրվում է գրափոր պահանջի հիման վրա՝ դիմումում նշված որոշակի օբյեկտի մասին:

Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը չպետք է շփոթել գործարքի նոտարական վավերացման հետ:

## 2.7. Ի՞նչ հետևանքներ կծագեն, եթե պարտադիր պետական գրանցման ենթակա գործարքները չգրանցվեն

Նախ, գործարքների նոտարական վավերացումը և գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումը միանգամայն տարրեր բաներ են: Ասենք միայն, որ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների փոփոխման հետ կապված գործարքները ենթակա են նախ նոտարական վավերացման և դրանից հետո միայն պետք է գրանցվեն համապատասխան պետական մարմիններում:

Համաձայն ՀՀ քաղ. օր. 301-րդ և 302-րդ հոդվածների՝ անշարժ գույքի առնչությամբ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման: Հիշյալ պահանջը չպահպանելը հանգեցնում է այդ գործարքի անվավերության: Օրենքն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման համար տալիս է ընդամենը 30 օր ժամանակ, որը հաշվում է նոտարի կողմից տվյալ գործարքը վավերացնելու օրից:

## 2.8. Ինչպես վարվել, եթե անշարժ գույքի կադաստրի պետական մարմինները հրաժարվում են գրանցել սնփականության իրավունքը

Եթե դիմեն եք անշարժ գույքի պետական կադաստր՝ գրանցելու համար անշարժ գույքի նկատմամբ ձեր սնփականության իրավունքը, սակայն նա այն չի գրանցում, ապա դուք պետք է դիմեն դատարան և դատարանի միջոցով պահանջեն այդ անել: Դատարանում, որպես պատասխանող կողմ հանդես կգա այն տարածքի անշարժ գույքի կադաստրի ստորաբաժանումը, որտեղ գտնվում է ձեր գույքը:

## 2.9. ՀՀ օրենսդրությամբ գործարքի գրանցման ինչպիսի կարգ է նախատեսված:

Ինչպես արդեն նշվեց, անշարժ գույքի նկատմամբ իրավունքները ենթակա են պարտադիր պետական գրանցման՝ գործարքի կնքման կամ նոտարի կողմից

Վավերացման օրվանից սկսած 30 օրվա ընթացքում: Իրավունքը պետք է գրանցվի տվյալ անշարժ գույքի գտնվելու վայրի անշարժ գույքի պետական ռեգիստրի տարածքային ստորաբաժանումում: Ասենք, որ գույքի նկատմամբ որևէ առանձին իրավունք չի գրանցվում, եթե գրանցված չէ տվյալ գույքի նկատմամբ սեփականության կամ օգտագործման իրավունքը: Օրինակ, եթե ցանկանում եք վարձակալության հանձնել ձեր սեփական հողամասում կառուցված ապօրինի շինությունը, չեք կարող այդ անել՝ քանի դեռ ձեռք ընդունել այդ շինության նկատմամբ սեփականության իրավունքը: Գույքի նկատմամբ իրավունքներ ունեցող անձը պետական գրանցման նպատակով անշարժ գույքի պետական ռեգիստրի տեղական ստորաբաժանում է ներկայացնում դիմում, որին պետք է կցված լինեն տվյալ անձին հատկացված (սեփականության իրավունքով կամ վարձակալության իրավունքով և այլն) հողի, շենքների, շինությունների մասին փաստաթղթերը, անշարժ գույքի օտարման (կամ վարձակալության) պայմանագիրը, պետական տուրքի վճարման անդորրագրերը:

Ներկայացված ֆաստաթղթերի՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխանության հարցը պարզեցնուուց հետո, անշարժ գույքի պետական ռեգիստրի տեղական ստորաբաժանումը կազմում է անշարժ գույքի միավորի վերաբերյալ կադաստրային գործ և այն գրանցում գրանցամատյանում:

Եթե ներկայացված ֆաստաթղթերն ստուգելիս անձշտություններ են հանդիպում, ապա գրանցող մարմինը փաստաթղթերի ընդունման օրվանից 5-օրյա ժամկետում դրանք վերադարձնում է դիմողին՝ նշելով, թե կոնկրետ ինչը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը: Դրանից հետո փաստաթղթերը ներկայացրած քաղաքացին 15-օրյա ժամկետում փաստաթղթերը՝ համապատասխան ուղղումներով և լրացումներով, պետք է կրկին ներկայացնի գրանցման:

Գույքի նկատմամբ իրավունքները համարվում են գրանցված՝ գրանցամատյանում դրանց գրանցման պահից: Գրանցման պահից էլ ծագում են տվյալ գույքի նկատմամբ քաղաքացու իրավունքները:

Անշարժ գույքի մարմինները պարտավոր են 15-օրյա ժամկետում գրանցել անշարժ գույքի նկատմամբ ձեր իրավունքները: Այսինքն՝ պետական գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո 15 օրվա ընթացքում համապատասխան մարմինները պարտավոր են գրանցել գույքի նկատմամբ ձեր իրավունքը: Անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցումից հետո տրվում է անշարժ գույքի սեփականության (կամ օգտագործման, կամ հիփոթենքի և այլն, նայած թե ինչ իրավունք է գրանցվում) վկայագիր:

## 2.10. Որքա՞ն են կազմում գույքի փոխանցման հետ կապված գործարքի նոտարական վավերացման ծախսները

Գույքի փոխանցման հետ կապված նոտարական գործողությունների համար պետական տուրքի զանձման կարգն ու չափերը սահմանված են «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով: Համաձայն այդ օրենքի 11-րդ հոդվածի, նոտարական գրասենյակները նոտարական գործողությունների համար պետական տուրքը գանձում են հետևյալ դրույքաչափերով:

1. Անշարժ գույքի՝ հողի և դրան ամրակայված շենքերի, շինուաթյունների յուրաքանչյուր միավորի օտարման (բացառությամբ՝ նվիրատվության), վարձակալության պայմանագրերը վավերացնելու համար՝

ա) զյուղատնտեսական նշանակության սեփականաշնորհված հողերի յուրաքանչյուր միավորի օտարման, զյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության, պետական սեփականություն համարվող հողերի օտարման համար՝ բազային տուրքի չափով,

բ) այլ գույքի համար՝ բազային տուրքի տասնապատիկի չափով:

2. Ավտոմեքենաների, մոտոցիկլեների և այլ ինքնագնաց մեքենաների ու մեխանիզմների օտարման (բացառությամբ՝ նվիրատվության) պայմանագրերը վավերացնելու համար՝

- ամուսնուն, ծնողին, զավակին՝ բազային տուրքի եռապատիկի չափով

- այլ անձանց՝ բազային տուրքի տասնապատիկի չափով:

Նոյն հոդվածի 6-րդ կետով նախատեսված է, որ նախակինում կնքված պայմանագրերով նախատեսված իրավունքները և պարտականությունները հանձնելու մասին գործարքների հաստատման, գույքի բոլոր տեսակների (բացի վերը նշվածներից, ինչպես նաև օրենքի 3-րդ, 4-րդ, 4.1, 4.2 և 5-րդ հոդվածներում նշվածներից) վաճառքի, նվիրատվության, փոխանակության պայմանագրերի վավերացման համար՝ բազային տուրքի տասնապատիկի չափով:

Ավելացնենք, որ բազային տուրքը հավասար է հազար դրամի, իսկ նոտարական գրասենյակից դուրս կատարվող նոտարական գործողությունների համար պետական տուրքը գանձվում է կրկնակի չափով:

Իսկ թե որքան են նոտարական մյուս գործողությունների համար գանձվող պետական տուրքի դրույքաչափերը, կարող եք իմանալ՝ ծանոթանալով հավելված 1-ին:

## 2.11. Անշարժ գույքի պետական գրանցման համար պետական տուրք նախատեսված է, թե՝ ոչ, և որքա՞ն:

Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար գանձվող պետական տուրքի դրույքաչափերը սահմանված են «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 36-րդ կետում, որն ամբողջությամբ բնրված է հավելված 2-ում:

## 2.12. Իրավունքների պետական գրանցման կամ գործարքների նոտարական վավերացման ծախսների հետ կապված ինչպիսի արտոնություններ գոյություն ունեն, և ովքե՞ր են դրանցից օգտվում

Նման արտոնություններ կան, և դրանք, ինչպես և դրանցից օգտվող անձանց շրջանակը սահմանված է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 24-րդ և 29-րդ հոդվածներում:

Համաձայն օրենքի 24 հոդվածի՝ «Նոտարական գործողություններ իրականացնող մարմիններում պետական տուրքի վճարումից ազատվում են».

ա. Փիզիկական անձինք՝ պետության օգտին կտակի կամ գույքի նվիրատվության պայմանագիրը հաստատելու համար,

գ. Փիզիկական անձինք՝ ժառանգության իրավունքի մասին նրանց վկայագիր տալու համար, եթե՝

- գույքը պատկանել է այնպիսի անձանց, որոնք զոհվել են նախկին ԽՍՀՄ-ը կամ Հայաստանի Հանրապետությունը պաշտպանելիս, պետական կամ հասարակական այլ պարտականություններ կատարելիս, կամ այն կապված է ներկայացնելու կամքը փրկելու, իրավակարգի պաշտպանության գծով նախկին ԽՍՀՄ և Հայաստանի Հանրապետության քաղաքացու պարտքը կատարելու հետ։

- բնակելի տունը՝ հողամասով (բնակարանը) կամ բնակարանային-շինարարական կոռուպտիվում փայլ անցնում է ժառանգատուի հետ համատեղ բնակվող այնպիսի անձանց, ովքեր ժառանգատուի մահվան օրվա դրությամբ եղել են հաշվառված նույն տանը և նրա մահից հետո շարունակում են բնակվել այնտեղ։

- ժառանգության իրավունք օբյեկտ են համարվում բանկերում եղած ավանդները, անձնական և գույքային ապահովագրության գծով ապահովագրական գումարները, պետական փոխառության պարտառմանը, աշխատավարձի գումարները, կենսաթոշակները։

դ. Փիզիկական անձինք՝ թոշակների և նպաստների ստացման վերաբերյալ լիազորագրերը հաստատելու համար։

Ե. Մայրեր՝ բազմազավակության շրանշաններով և մեղալներով իրենց պարզեցումներու մասին փաստաթղթերի պատճենների իւկությունը վավերացնելու համար։

գ. այն քաղաքացիների ժառանգները, ովքեր իրենց աշխատանքի (ծառայության) վայրում ծննդարկությունների և կազմակերպությունների հաշվին ապահովագրված են ներկա դժբախտ պատահարի հետևանքով մահվան կամ զոհվելու դեպքերից՝ ապահովագրական վարձատրության ժառանգման իրավունքը հաստատող վկայագիր տալու համար։

Ե. Երկրորդ աշխարհամարտի հաշմանդամները և այն անձինք, ովքեր հաշմանդամ են դարձել Հայաստանի Հանրապետությունը, նախկին ԽՍՀՄ-ը պաշտպանելիս կամ զինվորական այլ պարտականություններ կատարելիս վիրավորվելու, կոնտուզիայի, խնդման կամ ռազմաճակատում գտնվելու հետ կապված հիվանդության հետևանքով, նախկին պարտիզան հաշմանդամները, ինչպես նաև կենսաթոշակային օրենսդրությանը համապատասխան զինծառայողների՝ վերը նշված խմբերին հավասարեցված մյուս հաշմանդամները, երկրորդ աշխարհամարտում Հայաստանի Հանրապետությունը, նախկին ԽՍՀՄ-ը պաշտպանելիս կամ զինվորական այլ պարտականություններ կատարելիս զոհված կամ անհայտ կորած անձանց ընտանիքի անդամները՝ վերոհիշյալ հիմքերով արտոնություններ վերապահելու

համար անհրաժեշտ փաստաթղթերի պատճենների իսկությունը վավերացնելու համար.

թ. սնփականատերերը, օգտագործողները՝ կադաստրային քարտեզագրումն ավարտված տարածքներում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների առաջին պետական գրանցման գործընթացի ժամանակ պետական սնփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի օտարման պայմանագրերը վավերացնելու համար.

Ժ. ֆիզիկական անձինք՝ պետական սնփականություն համարվող բնակարանների անհատույց մասնավորեցման (նվիրատվության) պայմանագրի վավերացման համար.

Ժա. սնփականատերը՝ օրենքով նախատեսված դեպքերում սնփականության իրավունքով անհատույց տրամադրված պետական սնփականություն համարվող հողամասների օտարման պայմանագրերը վավերացնելու համար:

Ինչ վերաբերում է գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար պետական տուրքին, ապա դրանից ազատվում են պետական սնփականություն համարվող բնակարաններն անհատույց մասնավորեցրած քաղաքացիները՝ այդ բնակարանների նկատմամբ սնփականության իրավունքի գրանցման դեպքում:

Մի կարևոր հանգամանք ևս. առանձին վճարողների կամ վճարողների խմբերի համար պետական տուրքի գծով արտոնություններ կարող են սահմանել Հայաստանի Հանրապետության կառավարությունը և տեղական ինքնակառավարման մարմիններ՝ պետական տուրքերի բոլոր տեսակների գծով վճարողի փոխարեն պետական տուրքը վճարելու միջոցով:

## 2.13. Ի՞նչ է լիազորագիրը :

Հաճախ քաղաքացին, տարբեր պատճառներով, ի վիճակի չէ անձամբ ներկայացնել և պաշտպանել իր շահերն ու իրավունքները, հետևապես՝ տիրապետել, օգտագործել և տնօրինել իր սնփականությունը (օր., հիվանդ է, քացակայում է բնակավայրից և այլն): Այդ դեպքերի համար ՀՀ քաղ. օր. 321-րդ հոդվածը նախատեսել է լիազորագրի ինստիտուտը: Լիազորագիրը ներկայացնելու պարտավորեցման է գործել դրանում սահմանված լիազորությունների շրջանակում և ներկայացվողի անոնից գործելու իրավունք է վերապահում այն պահից, եթե ներկայացնելու համաձայնում է ստանալ լիազորագիրը կամ գործել դրանում սահմանված լիազորություններին համապատասխան: Լիազորությունները, որպես կանոն, տրվում են գրավոր և ձևակերպվում փաստաթղթով, որն էլ անվանվում է լիազորագիր: Լիազորագրում նշվում են այն հիմնական գործողությունները, այդ թվում գործարքները, որոնք կարող են կատարել ներկայացնելու: Այսպիսով, լիազորագիր է համարվում այն գրավոր լիազորությունը, որը մեկ անձը տալիս է մեկ ուրիշ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայացնելության համար (ՀՀ քաղ. օր. 321-րդ հոդվ., 1-ին կետ):

Նոտարական ձև պահանջող գործարքներ կնքելու համար լիազորագիրը պետք է վավերացնի նոտարը (օր., անշարժ գույքի առուվաճառքի գործարքը կնքելու համար):

## 2.14. Բացի նոտարներից էլ ովեր՝ կարող են վավերացնել լիազորագրերը

Նոտարի վավերացրած լիազորագրերին հավասարեցվում են՝

1. հոսպիտալներում, առողջարաններում և զինվորական այլ բուժական հաստատություններում բուժման մեջ գտնվող զինծառայողների ու մյուս անձանց լիազորագրերը՝ վավերացված տվյալ հաստատության պետի, բուժական մասի գծով նրա տեղակալի, ավագ կամ հերթապահ բժշկի կողմից.

2. զինծառայողների լիազորագրերը, իսկ զորամասերի, զորամիավորումների զինվորական հաստատությունների և ուսումնական հաստատությունների տեղաբաշխման այն վայրերում, որտեղ չկան նոտարական գրասենյակներ ու նոտարական գործողություններ կատարող այլ մարմիններ, ինչպես նաև բանվորների և ծառայողների, նրանց ընտանիքի անդամների ու զինծառայողների ընտանիքների անդամների լիազորագրերը՝ վավերացված այդ զորամասի, զորամիավորումների, զինվորական հիմնարկների կամ հաստատությունների հրամանատարի (պետի) կողմից.

3. ազատազրկման վայրերում գտնվող անձանց լիազորագրերը՝ վավերացված ազատազրկման համապատասխան հաստատության պետի կողմից.

4. բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում գտնվող չափահաս գործունակ քաղաքացիների լիազորագրերը՝ վավերացված նման հաստատության տնօրինության կամ բնակչության սոցիալական պաշտպանության համապատասխան մարմնի ղեկավարի (նրա տեղակալի) կողմից:

Աշխատավարձի և աշխատանքային հարաբերությունների հետ կապված այլ վճարներ ստանալու, հեղինակների և զյուտարարների վարձատրություն, նպաստներ և կենսաթոշակներ, քաղաքացիների բանկային ավանդներ ու փոստային առարումներ, այդ թվում՝ դրամական և ծանրոցային, ստանալու լիազորագրերը կարող են հաստատել նաև այն կազմակերպությունը, որտեղ լիազորագիր տվողն աշխատում կամ սովորում է, նրա բնակության վայրի տեղական ինքնակառավարման մարմինը և այն ստացիոնար բուժական հաստատության տնօրինությունը, որտեղ նա բուժվում է :

Լիազորագրի գործողության ժամկետը չի կարող գերազանցնել երեք տարին: Եթե լիազորագրում ժամկետ նշված չէ, ապա այն ուժը պահպանում է տալու օրվանից մեկ տարվա ընթացքում: Լիազորագրում պետք է նշվի նաև դրա կատարման տարեթիվը, ամիսը, ամսաթիվը: Հակառակ դեպքում այն առոշինչ կհամարվի:

## **2.15. Ո՞ր դեպքում լիազորագիրն իրավաբանական ուժ կունենա, եթե լիազորողը (գույքի սնվականատերը) գտնվում է Հայաստանից դուրս**

Եթե քաղաքացին գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս, ապա նա կարող է լիազորագիրն ուղարկել հեռազբով կամ կապի այլ միջոցներով։ Նման ճանապարհով լիազորագրի առաքումն իրականացնում է կապի աշխատակիցը և հաստատվում է կապի մարմնի կողմից։

Ընդհանրապես, լիազորագրի ձևը և գործողության ժամկետը որոշվում են այն պետության իրավունքով, որտեղ տրվել է լիազորագիրը։ Սակայն լիազորագրի ձևը չպահպանելը հիմք չէ այն անվավեր ճանաչելու համար, պայմանով, եթե պահպանվել են Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները։

## **2.16. Կարո՞ղ է, արդյոք, մեկ այլ անձի կողմից լիազորված անձը գործարք կնքել անձամբ իր առնչությամբ**

Ոչ, չի կարող։ Համաձայն ՀՀ քաղ. օր. 318-րդ հոդվածի 3-րդ կետի՝ «Ներկայացուցիչը չի կարող ներկայացվողի անունից գործարք կնքել անձամբ իր առնչությամբ։ Նա չի կարող գործարք կնքել նաև մեկ այլ անձի առնչությամբ, որի ներկայացուցիչն է միաժամանակ, քացառությամբ առևտրային ներկայացուցչության դեպքի։

## **2.17. Ինչպե՞ս վաղաժամկետ դադարեցնել լիազորագիրը**

Լիազորագիր տվող անձը կարող է ցանկացած ժամանակ վերացնել լիազորագիրը կամ վերալիազորումը, իսկ անձը, ում տրված է լիազորագիրը, հրաժարվել դրանից։

Լիազորագիրը վաղաժամկետ դադարում է նաև, եթե՝

1. դադարել է այն իրավաբանական անձը, որի անունից տրվել է լիազորագիրը,
2. դադարել է այն իրավաբանական անձը, որի անունով տրվել է լիազորագիրը,
3. մահացել է կամ անգործունակ, սահմանափակ գործունակ կամ անհայտ բացակայող է ճանաչվել այն անձը, ով տվել է լիազորագիրը,
4. մահացել է կամ անգործունակ, սահմանափակ գործունակ կամ անհայտ բացակայող է ճանաչվել այն անձը, ով տրվել է լիազորագիրը։

Լիազորագիր տված և այն հետազայում վերացրած անձը պարտավոր է դրա վերացման մասին տեղեկացնել լիազորագիր ստացած անձին, ինչպես նաև իրեն հայտնի երրորդ անձանց, որոնց առջև ներկայացուցչության համար տրված է լիազորագիրը։ Նման պարտականություն դրվում է նաև լիազորագիր տված անձի իրավահաջորդների վրա, եթե մահացել է կամ անգործունակ, սահմանափակ

գործունակ կամ անհայտ բացակայող է ճանաչվել այն անձը, ով տվել է լիազորագիրը:

## 2.18. ՈՒ՞մ է պատկանում գտնված գույքը

Եթե դուք որևէ գույք եք գտել, ապա պարտավոր եք այն հանձնել սեփականատիրոջ կամ այն անձին, ով իրավունք ունի ստանալու այդ գույքը, եթեն, իհարկե, դուք գիտեք, թե՞ ով է այդ գույքի սեփականատնրը կամ այն անձը, ով իրավունք ունի ստանալու:

Եթե դուք գույքը գտել եք շենքում կամ տրանսպորտում և ձեզ հայտնի չէ դրա սեփականատնրը, ապա այն պետք է հանձնվի շենքի կամ տրանսպորտի սեփականատիրոջ կամ տիրապետողին:

Եթե գույքը գտել եք ոչ թե շենքում կամ տրանսպորտում, այլ, ասենք, փողոցում, և հայտնի չէ դրա սեփականատնրը, կամ էլ եթե հայտնի է սեփականատնրը, սակայն հայտնի չէ նրա գտնվելու վայրը, ապա պարտավոր եք հայտնել ոստիկանություն կամ տեղական ինքնակառավարման մարմին: Ընդ որում, կարենոր չէ, թե ինչպես եք հայտնում գրավոր, թե՝ բանավոր:

Եթե գույքի սեփականատնրը կամ գույքը վերադարձնելու պահանջի իրավունք ունեցող անձն անհայտ է կամ անհայտ է նրանց գտնվելու վայրը, գույքը գտնող անձն իրավունք ունի գտնվածը պահել իր մոտ, նույնիսկ այն դեպքում, եթե նա գույքը գտնելու մասին հայտարարությամբ դիմել է ոստիկանություն կամ տեղական ինքնակառավարման մարմիններին:

Եթե պարզվի, որ գտնված գույքն արագ փչացող է կամ դրա պահպանման ծախսներն ավելի թանկ են, քան գույքի արժեքը, կարող եք վաճառել այդ գույքը և ստացված գումարը վերադարձնել այն ստանալու իրավունք ունեցող անձանց: Սակայն պետք է հիշել, որ նշյալ գույքը պետք է վաճառել՝ ձեռք բերելով վաճառքի գումարի չափը հավաստող գրավոր ապացույցներ: Որպես այդպիսիք կարող են ծառայել երկկողմանի հաստատված առումաճառքի գրավոր պայմանագիրը, հաշիվ-ապրանքագիրը, վճարման անդորրագիրը և այլն:

Գույքի կորստի, վնասվածքի համար գույքը գտնողը պատասխանատվություն կրի միայն այն դեպքում, եթե պարզվի, որ այն նդել է իր մեղքով:

## 2.19. Արդյո՞ք գույքը գտնողը ծախսերի հատուցման իրավունք ունի. ո՞ր դեպքերում, ի՞նչ կարգով և չափերով

Այս, գույքը գտնողը նման իրավունք ունի: Նա պետք է բարեխաղճորեն կատարի իր պարտականությունները, այսինքն՝ այն խնամի և պահպանի պատշաճ կնքպով: Գույքը գտած և տիրոջ վերադարձած անձն իրավունք ունի նրանից պահանջնել գույքը պահելու, հանձնելու կամ իրացնելու հետ կապված ծախսերի հատուցումը: Այդ իրավունքը, այսինքն՝ ծախսերի դիմաց

փոխառուցման իրավունքը գույքը գտնողը պահպանում է նաև այն դեպքում, եթե գտանքը հանձնում է համայնքի սեփականությանը:

Բացի գույքի պահպանման համար ծախսերի դիմաց փոխառուցումից, գույքը գտած անձն իրավունք ունի գույքի տիրոջից պահանջնելու վարձատրություն՝ գույքի արժեքի մինչև 20 տոկոսի չափով: Եթե գույքն իրենից արժեք է ներկայացնում միայն այն ստանալու իրավասություն ունեցող անձի համար (օր., եթե դրանք ավտոմեքենայի բանալիներ են կամ ընտանեկան արժեքներ), ապա դրա վարձատրության չափը որոշվում է փոխադարձ համաձայնությամբ, իսկ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում դատարանով:

Գույքը գտնողն իրավունք ունի մինչև իրեն վարձատրելը պահել գտած գույքը:

Վարձատրության իրավունքը չի ծագում, եթե գույքը գտնողը չի հայտնել գտանքի մասին կամ փորձել է թաքցնել այն:

## 2.20. Գույքը գտնողը որքա՞ն ժամանակ պետք է գտանքն իր մոտ պահի, և ի՞նչ է տեղի ունենում այդ ժամկետը լրանալուց հետո

Պատասխանենք, որ եթե գտանքի մասին ոստիկանություն կամ տեղական ինքնակառավարման մարմին հայտնելու պահից հետո՝ վեց ամսվա ընթացքում, գտնված գույքն ստանալու իրավագոր անձը չի հայտնաբերվել կամ գույքի նկատմամբ իր իրավունքի մասին չի հայտարարել այն գտնող անձին, ոստիկանությանը կամ տեղական ինքնակառավարման մարմին, ապա գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ձեռք է բերում դրա գտնողը: Իսկ եթե գույքը գտնողը հրաժարվի գտնված գույքը վերածել իր սեփականության, այն կդառնա համայնքի սեփականությունը (Քաղ. օր. 181-րդ հոդված):

## 2.21. Ի՞նչ է նշանակում տիրագործ գույք

Համաձայն ՀՀ քաղ. օր. 178-րդ հոդվածի 1-ին կետի՝ տիրագործ է համարվում այն գույքը, որը չունի սեփականատեր կամ որի սեփականատերն անհայտ է, կամ էլ այն գույքը, որի սեփականատերը հրաժարվել է դրա նկատմամբ սեփականության իրավունքից: Այսպիսով, որպեսզի գույքը համարվի տիրագործ, անհրաժեշտ է ներքոհիշյալ երեք հատկանիշներից որևէ մեկի գոյությունը.

1. չունի սեփականատեր (օր., քաղաքացու մահվան դեպքում, որը չունի ոչ ըստ կտակի և ոչ էլ ըստ օրենքի ժառանգներ)

2. սեփականատերն անհայտ է (գտանք, գանձ)

3. սեփականատերը հրաժարվել է դրա նկատմամբ սեփականության իրավունքից:

Տիրագործ շարժական գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերման հիմքներն ու կանոնները սահմանված են ՀՀ քաղ. օր. 179-186-րդ հոդվածներում:

Քաղ. օր. 179-րդ հոդվածը սահմանում է այն շարժական գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերման հիմքները, որից սեփականատերը հրաժարվել է, 183-184-րդ հոդվածներն՝ առանց հսկողության թողնված կենդանիների նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերման, իսկ 186-րդ հոդվածը՝ գանձի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերման կանոնները:

Ինչ վերաբերում է տիրազուրկ անշարժ գույքին, ապա դրա նկատմամբ սեփականության իրավունքը կարող է ձեռք բերվել միայն ձեռքբերման վաղնմության ուժով: Թե ի՞նչ է նշանակում ձեռքբերման վաղնմություն, և ինչ կարգով է կիրառվում այն, մանրամասն անդրադարձն ենք հաջորդ հարցի պատասխանում:

## 2.22. «Նարավո՞ր է, արդյոք, սեփականաշնորհել անշարժ գույքը՝ երկարատև տիրապետման հիմքով

Այս, հնարավոր է: Համաձայն ՀՀ քաղ. օր. 187-րդ հոդվածի, եթե քաղաքացին կամ իրավաբանական անձը տասը տարվա ընթացքում բարեխտնորեն, բացահայտ և անընդմեջ տիրապետում է իրեն սեփականության իրավունքով չպատկանող անշարժ գույքը՝ որպես սեփական գույք, ապա այդ գույքի նկատմամբ ձեռք է բերում սեփականության իրավունք՝ ձեռքբերման վաղնմության հիմքով: 187-րդ հոդվածը ճանաչում է ձեռքբերման վաղնմությունը՝ միայն որոշակի պայմանների առկայության դեպքում: Այդ պայմանները հավասարազոր են, ինչը նշանակում է, որ եթե չպահպանվի դրանցից թեկուզ մեկը, ապա կրացառվի անձի կողմից սեփականության իրավունքի ձեռքբերումը՝ ձեռքբերման վաղնմության հիմքով:

Առաջին պայմանը՝ գույքի բարեխտից տիրապետման պայմանն է, ինչը նշանակում է, որ այդ գույքը հայտնվել է տվյալ անձի մոտ այնպիսի գործողությունների կամ դեպքերի հետևանքով, որոնք ուղղակիորեն ճանաչվում են օրենքով կամ այլ իրավական ակտերով, կամ եթե չեն ճանաչվում նման ակտերով, ապա թերևս չեն հակասում դրանց:

Հաջորդ պայմանը՝ բացահայտ տիրապետման պայմանն է, որը նշանակում է, որ անձը որևէ գործողություն չի նախաձեռնում, որպեսզի թարգնի գույքի տիրապետման հանգամանքը, չի թարգնում գույքը երրորդ անձանցից, կատարում է այն բոլոր պարտականությունները, որոնք բխում են տիրապետման փաստից, այդ թվում նաև՝ վճարում է օրենքով սահմանված հարկերն ու տուրքերը, պահպանում է պարտադիր ապահովագրության կանոնները և այլն: Գլխավորն այն է, որ տիրապետողը շթարգնի այն հանգամանքը, որ ինքը տվյալ գույքի սեփականատերը չէ:

Մյուս՝ անընդմեջ տիրապետման պայմանն է: Ըստ այդ պայմանի գույքը տիրապետողի մոտ պետք է գտնվի անընդհատ, ամբողջ ընթացքում: Ընդ որում, տիրապետման վաղնմություն վկայակոչող անձը կարող է իր տիրապետման ժամկետին միացնել այն ժամանակը, որի ընթացքում այդ գույքին տիրապետել է այն անձը, որի իրավահաջորդն է ինքը:

## 2.23. Ի՞նչ կարգով է ձևակերպվում երկարատև տիրապետման հիմքով ձեռք բերված գույքի սեփականության իրավունքը

Ձեռքբերման վաղնմության ուժով անշարժ գույքի նկատմամբ քաղաքացու սեփականության իրավունքը ճանաչվում է դատարանի միջոցով։ Այդպիսի ճանաչման հիմքներն ու կարգը սահմանված են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 33-րդ գլուխում։ Համաձայն հիշյալ օրենսգրքի 186-րդ հոդվածի՝ քաղաքացին անշարժ գույքը տիրապուրկ ճանաչելու վերաբերյալ դիմումը պետք է ներկայացնի այդ գույքի գումարու վայրի քաղաքացիական գործեր քննող դատարան։

Դատարանը, գտնելով, որ գույքը սեփականատեր չունի կամ սեփականատերն այն թողել է՝ առանց դրա նկատմամբ սեփականության իրավունքը պահպանելու մտադրության, վճիռ է կայացնում գույքը տիրապուրկ ճանաչելու և տիրապետող անձի սեփականությանն այն հանձնելու մասին (Քաղ. դատ. օր. հոդվ. 188)։

Մի կարևոր հանգամանք ևս, անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը՝ ձեռքբերման վաղնմության ուժով գույքը ձեռք բերած անձի համար ծագում է այդ իրավունքի պետական գրանցման պահից։

## 2.24. Ի՞նչ տարբերություն, եթե գտանքը ոչ թե սովորական իր է այլ՝ զանձ

Նախ պարզենք, թե օրենքն ինչ նկատի ունի գանձ հասկացության տակ։ Համաձայն ՀՀ քաղ. օր. 186-րդ հոդվածի դրույթների՝ գանձ են համարվում հողում կամ այլ գույքում պահված կամ այլ նηանակով թաքցված դրամը կամ արժեքավոր առարկաները, այդ թվում նաև պատմության և մշակույթի հուշարձաններ պարունակող արժեքները, որոնց սեփականատերը չի կարող դրանք հայտնաբերել կամ օրենքի ուժով կորցրել է դրանց նկատմամբ սեփականության իրավունքը։

Գանձի նկատմամբ սեփականության իրավունքն անզնում է այն անձին, որին պատկանում է այն գույքը (հողամաս, կառույց և այլն), որում թաքցված է եղել գանձը, և այն հայտնաբերող անձին՝ հավասար բաժիններով, եթե նրանց համաձայնությամբ այլ բան չի սահմանվել։ Առանց հողամասի կամ այլ գույքի սեփականատիրոջ համաձայնության պեղումներ կատարող կամ արժեքներ որոնող անձանց կողմից գանձ հայտնաբերվելու դեպքում այն ամբողջությամբ տրվում է հողամասի կամ գույքի սեփականատիրոջը։

Ինչ վերաբերում է պատմության և մշակույթի հուշարձաններ պարունակող գանձին, ապա այդպիսի հանձնվում են պետության սեփականությանը։ Ընդ որում, այս դեպքում հողամասի կամ այլ գույքի սեփականատերը և գանձը հայտնաբերող անձն իրավունք ունեն միասին ստանալու վարձատրություն՝ գանձի արժեքի 50 տոկոսի չափով։ Վարձատրությունն այդ անձանց միջև

բաշխվում է հավասարապես, եթե նրանց համաձայնությամբ այլ բան չի սահմանվել:

Առանց գույքի սնփականատիրոջ համաձայնության պեղումներ կատարող կամ արժեքներ որոնող անձանց կողմից գանձ հայտնաբերվելու դեպքում վարձատրությունն ամբողջությամբ տրվում է գույքի սնփականատիրոջը:

Կարևոր է հիշել նաև, որ նշյալ կանոնները չեն տարածվում այն անձանց վրա, որոնց համար պեղումներ և գանձ հայտնաբերելու որոնումներ կատարելը մտնում են իրենց աշխատանքային կամ ծառայողական պարտականությունների մեջ:

## 2.25. «Հնարավո՞ր է, արդյոք, սնփականաշնորհել ապօրինի շինությունը, եթե՝ այն, ապա՝ ինչպե՞ս:

Նախ, հստակեցնելու համար անհրաժեշտ է պարզել, թե որ կառույցն է համարվում ինքնակամ կառույց: Համաձայն ՀՀ քաղ. օր. 188 հոդվածի 1-ին կետի՝ ինքնակամ կառույց է համարվում ի խախտումն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգի՝ ոչ շինարարության իրականացման նպատակով հատկացված հոդամասում կամ առանց անհրաժեշտ թույլտվության կամ քաղաքաշինական ու շինարարական նորմերի և կանոնների էական խախտումներով ստեղծված բնակելի շենքը, շինությունը, այլ կառույցը կամ այլ անշարժ գույքը: Այսպիսով, կառույցն ինքնակամ է դիտվում հետևյալ հատկանիշներից որևէ մեկի առկայության դեպքում:

Նկատենք, որ այստեղ խոսքը ոչ միայն «հատկացված հոդամասի» մասին է, այլ «այդ նպատակով հատկացված հոդամասի»: Դա նշանակում է, որ, օրինակ, եթե հողը ձեզ հատկացվել է, ասենք, հողագործության նպատակով կամ որպես արտավայր, իսկ դուք այդ հոդամասում շինություն եք կառույցել, ապա այդ շինությունը ևս կդիտվի ապօրինի շինություն: Ավելին, եթե հողը հատկացվել է մի որևէ կոնկրետ շինության համար, բայց դուք կառույցել եք բոլորովին այլ շինություն, ապա այն նույնպես ապօրինի շինություն կհամարվի:

Համաձայն «Քաղաքաշինության մասին» օրենքի 23 հոդվածի 3-րդ մասի՝ «Ծինարարության թույլտվությունը համայնքներում տալիս է համայնքի դեկավարը, համայնքի վարչական սահմաններից դուրս գտնվող տարածքներում՝ մարզպետը, Երևան քաղաքում՝ թաղային համայնքի դեկավարը՝ օրենքին և Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգին համապատասխան՝ Երևանի խորհրդի սահմանած կարգով:

Քաղաքաշինական ու շինարարական նորմերը սահմանվում են ճարտարապետաշինարարական-նախագծային ֆաստաթղթերում քաղաքաշինական ու շինարարական նորմերի պահանջներին համապատասխան:

Ավելացնենք, որ ամեններ կարևոր չէ շինության տեսակը՝ բնակելի է այն, թե՛ ոչ եթե խախտվել են հիշյալ կանոններն, ապա այն ինքնակամ է:

Ինքնակամ շինություն կառույցած անձը դրա նկատմամբ ձեռք չի բերում սնփականության իրավունք: Նա իրավունք չունի տնօրինելու կառույցը՝ այն վաճառել, նվիրել, հանձնել վարձակալության, կնքել այլ գործարքներ՝ մինչև չորոշվի դրա սնփականության հարցը: Դատարանը կարող է ինքնակամ կառույցի նկատմամբ ճանաչել այն անձի սնփականության իրավունքը, որին սնփականության իրավունքով պատկանող հոդամասում իրականացվել է

## **2.26. Ի՞նչ տարբերություն կա բաժնային և համատեղ սնիվականության միջև**

Գույքը սնիվականության իրավունքով կարող է պատկանել ոչ միայն մեկ, այլև երկու կամ ավելի անձանց: Նման դեպքերում գույքը նրանց է պատկանում ընդհանուր սնիվականության իրավունքով:

Ընդհանուր սնիվականությունը լինում է բաժնային կամ համատեղ:

Ընդհանուր սնիվականություն հանդիսացող գույքը բաժնային է լինում այն դեպքում, եթե որոշված է սնիվականատերներից յուրաքանչյուրի բաժնի չափը:

Համատեղ է համարվում այն սնիվականությունը, որի սնիվականատերների բաժինները որոշված չեն:

Ընդհանուր բաժնային սնիվականության մասնակիցներից յուրաքանչյուրի իրավունքը կախված է նրա մասնակցության փայից, իսկ մասնաբաժնի չափը՝ իր ներդրած միջոցների չափից, համասնիվականատեր դառնալու հանգամանքներից (օր., կտակարարի կամքից, ժառանգությամբ ստացված գույքի արժեներից և այլն):

Մինչեւ ընդհանուր համատեղ սնիվականության մասնատերների սնիվականատիրական իրավունքները բխում են ամուսնական, ընտանելկան հարաբերություններից և հարկ չի լինում վաղօրոք որոշել նրանց բաժինների չափը: Նրանց բաժինները ենթադրվում են հավասար, եթե համասնիվականատերներն այլ բան չեն սահմանել:

Եթե ընդհանուր բաժնային սնիվականության մասնակիցներն ընդհանուր գույքի նկատմամբ իրավունքում ունեն որոշակի բաժին, (համասնիվականատիրոջ բաժինն արտահայտվում է թվաքանական կրտորակով  $1/2$ ,  $1/3$  և այլն, կամ տոկոսներով  $50$ ,  $60$  և այլն), ապա ընդհանուր համատեղ սնիվականության մասնակիցների բաժինները վաղօրոք որոշված չեն: Նրանց բաժինները որոշվում են ընդհանուր սնիվականության իրավունքի դադարման և օրենքով նախատեսված այլ դեպքերում:

## **2.27. Ինչպիսի՞ն է բաժնային սնիվականություն համարվող գույքի օգտագործման կարգը**

Բաժնային սնիվականության ներքո գտնվող գույքը տիրապետում և օգտագործում են դրա բոլոր մասնակիցները՝ փոխադարձ համաձայնությամբ, իսկ համաձայնության բազակայության դեպքում դատարանի սահմանած կարգով (Քաղ. օր. հոդվ. 191):

Ընդհանուր սեփականության մասնակիցները գույքի տիրապետման և օգտագործման հարցերը լուծելիս, անկախ ունեցած բաժնի չափնրից, օգտվում են հավասար ձայնի իրավունքից: Համասեփականատերերն, ընդհանուր սեփականություն հանդիսացող գույքի բնույթին համապատասխան, կարող են տիրապետել և օգտագործել գույքի մի մասը՝ բնեղենով, կամ ամբողջ գույքը՝ սահմանված հերթականությամբ: Օրինակ, բնակելի տան յուրաքանչյուր համասեփականատեր ինքնուրույն տիրապետում և օգտագործում է իր զբաղեցրած բնակելի մակերեսը, իսկ ընդհանուր օգտագործման տարածքները և օժանդակ հարմարությունները՝ համասեփականատերների կայացրած համաձայնությանը համապատասխան: Մինչդեռ ավտոմեքենայի համասեփականատերերն այն կարող են օգտագործել կամ բոլորը միասին, կամ սահմանված հերթականությամբ:

Բաժնային սեփականության յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի պահանջնու, որ իր տիրապետմանը և օգտագործմանը հանձնվի գույքի մեջ իր բաժնին համաշափ մաս, իսկ դրա անհնարինության դեպքում՝ գույքը տիրապետող և օգտագործող մյուս մասնակիցներից կարող է պահանջնու համապատասխան փոխհատուցում (Քաղ. օր. հոդվ. 191, 2-րդ մաս): Անկախ նրանից, թե յուրաքանչյուր սեփականատեր ընդհանուր սեփականություն հանդիսացող գույքի որ մասն է փաստացի տիրապետում և օգտագործում, սեփականության բաժանում, բաժնեհանում տեղի չի ունենում: Այդ պատճառով, եթե բնեղենով համասեփականատերներից մեկի օգտագործմանը տրամադրված մասը (օրինակ, տան մասը) ոչնչանա, ապա ընդհանուր սեփականության իրավունքում նրա ունեցած բաժինը չի փոխվի: համասեփականատերները կարող են սահմանել անվճառ մնացած մասի օգտագործման նոր կարգ:

Բաժնային սեփականություն հանդիսացող գույքից ստացվող պտուղները, արտադրանքը և եկամուտները ներառվում են ընդհանուր գույքի կազմում ու բաժնային սեփականության մասնակիցների միջև բաշխվում են նրանց բաժիններին համաշափ, եթե այլ բան նախատեսված չէ նրանց համաձայնությամբ (Քաղ. օր. հոդվ. 193): Բաժնային սեփականության յուրաքանչյուր մասնակից պարտավոր է իր բաժնին համապատասխան մասնակցել ընդհանուր գույքից գանձվող հարկերին, տուրքերին և մյուս վճարումներին, դրա պահման և պահպանման հետ կապված անհրաժեշտ ծախսներին: Սեփականատերներից մեկի կողմից, առանց մյուսների համաձայնության, կատարված ոչ անհրաժեշտ ծախսները մյուս սեփականատերները պարտավոր չեն հատուցնու:

## **2.28 Կարո՞ղ է, արդյոք, բաժնային սեփականության մասնակիցն ինքնուրույն տնօրինել իր բաժինը և ինչպես**

Բաժնային սեփականության ներք գտնվող գույքը տնօրինվում է դրա բոլոր մասնակիցների համաձայնությամբ ( Քաղ. օր. 192 հոդվ. 1-ին մաս): Սակայն այս կանոնը համասեփականատիրոջը չի գրկում իր հայեցողությամբ իրեն պատկանող բաժինը տնօրինելու իրավունքից: Նույն հոդվածը նախատեսում է, որ բաժնային սեփականության յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի իր

բաժինը վաճառել, նվիրել, կտակել, գրավ դնել կամ այլ կերպ տնօրինել: Սակայն բաժնի հատուցմամբ օտարման դեպքում օտարողը պարտավոր է պահպանել զնելու նախապատվության իրավունքի վերաբերյալ սահմանված կանոնները: Նախապատվության իրավունքը՝ հավասար պայմաններում մյուսների համեմատությամբ որոշակի անձանց (տվյալ դեպքում մյուս համասեփականատերներին) վերապահված արտոնությունն է: Այսպիսով, նախքան գույքի իր բաժինը նրբորդ անձանց վաճառելը, դրա սեփականատերը պարտավոր է այն առաջարկել մյուս համասեփականատերներին, և միայն զնելոց նրանց իրաժարվելու դեպքում նա կարող է վաճառել այլ անձանց:

Գնելու նախապատվության իրավունքը կիրառելի է այն դեպքում, եթե համասեփականատերն իր բաժինը ցանկանում է վաճառել կամ փոխանակել ընդհանուր բաժնային սեփականության մասնակից չհանդիսացող նրբորդ անձի: Այսինքն՝ այդ իրավունքը չի գործում, եթե բաժնի իրավունքը օտարվում է համասեփականատերներից որևէ մեկին: Այդ իրավունքը չի գործում նաև այն դեպքում, եթե համասեփականատերներն ընդհանուր սեփականության իրավունքում ունեցած բաժինը համասեփականատեր չհանդիսացող անձի են օտարում այլ եղանակով (նվիրատվություն, կտակ): Անզամ փոխանակման դեպքում զնելու նախապատվության իրավունքը գործում է այն ժամանակ, եթե համասեփականատերը ցանկանում է իր բաժնի դիմաց ստանալ տեսականիշներով որոշվող իրեն: Օրինակ, եթե համասեփականատերը տան սեփականության իրավունքում ունեցած բաժինը փոխանակում է կոնկրետ վայրում գտնվող մեկ սենյականոց բնակարանի հետ, ապա մյուսները, իհմք ընդունելով նախապատվության իրավունքը, չեն կարող առաջարկել մեկ այլ վայրում գտնվող մեկ սենյականոց բնակարան:

Զադ. օր. 195 հոդվածի համաձայն՝ զնելու նախապատվության իրավունքը չի կիրառվում նաև բաժինն աճուրդով վաճառելու դեպքում: Մյուս սեփականատերներն իրավունք ունեն ընդհանուր հիմունքներով մասնակցել աճուրդին:

Ըստ զնելու նախապատվության իրավունքի ընդհանուր սեփականության իրավունքում բաժինը նրբորդ անձի վաճառելիս բաժնային սեփականության մյուս մասնակիցները՝ վաճառված բաժինը վաճառքի գնով և այլ հավասար պայմաններով զնելու նախապատվության իրավունք ունեն, բացառությամբ իրապարակային աճուրդով վաճառքի դեպքների:

## 2.29. Կարո՞ղ է, արդյոք, ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսացող գույքի որևէ սեփականատեր ինքնուրույն օգտագործել և տնօրինել այդ գույքը

Ընդհանուր համատեղ սեփականությունն առաջանում է այն դեպքում, եթե կոնկրետ օբյեկտի սեփականության իրավունքը համասեփականատերների միջև բաժանված չէ, այլ պատկանում է նրանց բոլորին՝ համատեղ: Այդպիսի հարաբերության մասնակիցներից ոչ ոք վաղօրոք չգիտի իր ստույգ բաժնի չափը: Այն կարող է որոշվել միայն

համատեղ սնվականության ներքո գտնվող գույքը բաժանելիս կամ բաժինն առանձնացնելիս:

Այդպիսի հարաբերություններ կարող են առաջանալ ամուսինների, բնակարանը սնվականացրած ընտանիքի անդամների, զյուղացիական տնտեսության անդամների միջև:

Համատեղ սնվականության հիմնական առանձնահատկություններից է այն, որ սնվականության մասնակիցները, եթե այլ համաձայնություն չեն կայացրել, գույքը տիրապետում և օգտագործում են միասին, իսկ տնօրինումն իրականացվում է բոլոր մասնակիցների համաձայնությամբ, անկախ այն բանից, թե մասնակիցներից ով է կնքում գույքը տնօրինելու գործարքը: Համատեղ սնվականության մասնակիցներից մեկի կողմից կնքված լնդիանուր սնվականության տնօրինման գործարքը կարող է անվավեր ճանաչվել մնացած մասնակիցների պահանջով՝ գործարք կնքող մասնակցի մոտ անհրաժեշտ լիազորության բացակայության դեպքում, եթե ապացուցվի, որ գործարքի մյուս կողմն իմացել է կամ ակնհայտորեն պետք է իմանար այդ մասին (Քաղ. օր. հոդվ. 198):

Այսպես, ընդհանուր գույքը տնօրինելու՝ ամուսիններից մեկի կողմից կնքված գործարքը դատարանը կարող է անվավեր ճանաչել, եթե ապացուցված է, որ մյուս կողմը գիտեր կամ պարտավոր էր իմանալ, որ ամուսինը համաձայն չէ նման գործարք կնքելուն:

Հետևաբար, եթե դուք ձեռք եք բերում ընդհանուր համատեղ սնվականություն հանդիսացող գույք, ճիշտ կիխնի ստանալ բոլոր մասնակիցների համաձայնությունը:

Համատեղ սնվականություն հանդիսացող գույքը բաժանելը նույնպես ունի իր առանձնահատկությունները:

### 2.30. Գյուղացիական և զյուղացիական կոլեկտիվ տնտեսության անդամներն ի՞նչ իրավունքներ ունեն տնտեսության սնվականության նկատմամբ

«Գյուղացիական և զյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին» ՀՀ օրենքի նորմերը հիմք են տալիս պնդելու, որ զյուղացիական տնտեսության գույքը նրա անդամներին է պատկանում ընդհանուր համատեղ սնվականության իրավունքով և դրա նկատմամբ կիրառելի են ՀՀ քաղ. օր. 198-200-րդ հոդվածների կանոնները, եթե զյուղացիական տնտեսության անդամների համաձայնությամբ կամ օրենքով այլ բան չի սահմանված: Գյուղացիական տնտեսության գույքը տիրապետվում, օգտագործվում և տնօրինվում է նրա անդամների համաձայնությամբ:

Գյուղացիական տնտեսության արտադրած արտադրանքը, ստացած պտուղներն ու եկամուտները զյուղացիական տնտեսության սնվականությունն են և օգտագործվում են զյուղացիական տնտեսության անդամների համաձայնությամբ:

Անկախ նրանից, թե ով է ներկայացնում տնտեսությունը երրորդ անձանց հետ փոխհարաբերություններում և ինչ հիմքով, զյուղացիական

տնտեսության գույքը տիրապետում, օգտագործում և տնօրինում են բոլոր անդամները՝ փոխադարձ համաձայնությամբ:

Գույքի տիրապետման, օգտագործման և տնօրինման կապակցությամբ ծագած վնաճերը լուծում է դատարանը՝ տնտեսության՝ 16 տարին լրացած անդամի հայցով:

Գյուղացիական տնտեսության համատեղ սեփականությունը համարվող գույքը տնօրինվում է բոլոր մասնակիցների համաձայնությամբ, անկախ այն բանից, թե մասնակիցներից ով է կնքում գույքը տնօրինելու գործարքը: Եթե գործարքը կնքվում է հողամասն օտարելու համար, ապա այդպիսին կնքվել չի կարող, եթե օտարվող կամ մնացող հողակտորի չափը փոքր է տվյալ բնակավայրի համար հաշվարկված հողաբաժնի նվազագույն չափից:

## 2.31. Ինչպե՞ս բաժանել բաժնային սեփականությունը

Բաժնային սեփականության մասնակիցներն իրավունք ունեն պահանջելու գույքի բաժանում, իսկ յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի պահանջելու իր բաժինը առանձնացնել ընդհանուր գույքից: Ինչպես է դա կատարվում: Բաժնային սեփականություն հանդիսացող գույքը կարող է բաժանվել մասնակիցների համաձայնությամբ: Գույքը մասնակիցների միջև բաժանելու դեպքում ընդհանուր սեփականության նախկին սեփականատերներից յուրաքանչյուրը դառնում է կոնկրետ գույքի սեփականատեր: Եթե համասեփականատերները չեն կարողանում համաձայնության գալ ընդհանուր սեփականության բաժանման կամ համասեփականատերներից մեկի բաժինն առանձնացնելու եղանակի և պայմանների հարցում, ապա բաժնային սեփականության մասնակիցն իրավունք ունի դատական կարգով պահանջելու ընդհանուր գույքից բնեղենով առանձնացնել իր բաժինը: Եթե բաժինը բնեղենով առանձնացնել չի թույլատրվում օրենքով կամ դա անհնարին է առանց գույքին վնաս պատճառելու, ապա առանձնացնել ցանկացող սեփականատերը բաժնային սեփականության մյուս մասնակիցներից կարող է պահանջել վճարելու իր բաժնի արժեքը (Քաղ. օր. հոդվ. 197): Իսկ եթե հնարավոր չեն բնեղենով առանձնացնել ընդհանուր սեփականության իրավունքում ունեցած բաժնին համաչափ գույք, ապա անհամապատասխանությունը վերացվում է համապատասխան գումար կամ այլ փոխհատուցում վճարելով:

Բաժնային սեփականության մասնակցին բաժինը բնեղենով հատուցելու (առանձնացնելու) փոխարեն մյուս համասեփականատերների կողմից փոխհատուցման վճարումը թույլատրվում է նրա համաձայնությամբ: Այն դեպքում, եթե համասեփականատիրոջ բաժինն անշան է, և նա էլ էական շահ չունի ընդհանուր գույքը օգտագործելու հարցում, դատարանը կարող է նաև, այդ համասեփականատիրոջ համաձայնության բացակայության դեպքում, բաժնային սեփականության մյուս մասնակիցներին թույլատրել վճարելու փոխհատուցում:

Բաժնային սեփականության մասնակցի բաժինն առանձնացնելու պահանջ կարող են ներկայացնել նաև նրա պարտատերերը՝ բաժնի վրա բռնագանձում տարածելու համար: Եթե պարտադիրոց պահանջով բաժինը բնեղենով առանձնացնելու անհնարին է կամ դրա դեմ առարկում են բաժնային սեփականության մնացած մասնակիցները, պարտատերն իրավունք ունի մնացած մասնակիցներից պահանջել շուկայական զներով գնելու պարտապանի բաժինը՝ պարտը մարելու համար: Ընդհանուր սեփականության մասնակիցների կողմից պարտապանի բաժինը ձևոք բնեղենուց հրաժարվելու դեպքում՝ պարտատերն իրավունք ունի դատարանով բռնագանձում տարածելու ընդհանուր սեփականության իրավունքում պարտապանի բաժնի վրա՝ այդ բաժինը հրապարակային սակարկություններով վաճառելու միջոցով (Քաղ. օր. հոդվ. 200):

### 2.32. Ինչպե՞ս բաժանել համատեղ սեփականությունը

Համատեղ սեփականության մասնակիցների միջև ընդհանուր գույքը բաժանվում կամ նրանցից մեկի բաժինն առանձնացվում է ընդհանուր գույքի նկատմամբ իրավունքում մասնակիցներից յուրաքանչյուրի բաժինը նախապես որոշելուց հետո (Քաղ. օր. հոդվ. 199, կետ 1-ին): Համատեղ սեփականության մասնակիցների բաժինները համարվում են հավասար, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ մասնակիցների համաձայնությամբ: Ընդհանուր գույքը բաժանվում և դրանց բաժին է առանձնացվում նույն կարգով, ինչ կարգով, որ դա կատարվում է բաժնային սեփականության դեպքում:

### 2.33. Ինչպե՞ս է բաժանվում ընդհանուր գույքը գյուղացիական տնտեսության անդամների միջև

Գյուղացիական տնտեսության անդամների միջև ընդհանուր գույքը բաժանվում կամ նրանցից մեկի բաժինն առանձնացվում է ընդհանուր գույքի նկատմամբ իրավունքում անդամներից յուրաքանչյուրի բաժինը նախապես որոշելուց հետո: Գյուղացիական տնտեսության գույքի բաժանում կատարվում է համատեղ սեփականություն հանդիսացող գույքը բաժանելու կանոններով: Գույքն անդամների միջև, որպես կանոն, բաժանվում է հավասարապես, եթե այլ բան նախատեսված չէ անդամների համաձայնությամբ, իսկ հողամասը բաժանվում է բաղաքացիական և հողային օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գյուղացիական տնտեսության կազմից անդամներից մեկի դուրս գալու դեպքում տնտեսությանը պատկանող հողամասը և արտադրության միջոցները չեն կարող բաժանվել: Տնտեսությունից դուրս եկողն իրավունք ունի ստանալու դրամական փոխհատուցում՝ այդ գույքից իրեն հասանելիք բաժնին համապատասխան:

## 2.34. Ինչպե՞ս բաժանել կամ վաճառել ընդհանուր սնփականության բաժինը

Նախքան գույքի իր բաժինը նրբորդ անձանց վաճառելը, դրա սնփականատերը պարտավոր է այն առաջարկել մյուս համասնփականատերներին, և եթե նրանք հրաժարվեն գնելուց, ապա միայն այդ դեպքում նա կարող է այն վաճառել այլ անձանց:

Բաժինը վաճառողը պարտավոր է իր բաժինը նրբորդ անձի վաճառելու մտադրության մասին գրավոր տեղեկացնել բաժնային սնփականության մյուս մասնակիցներին՝ նշելով զինը և վաճառքի պայմանները: Եթե բաժնային սնփականության մյուս մասնակիցները հրաժարվում են վաճառվող բաժինը առաջարկող պայմաններով գնելուց, կամ բաժինը ձեռք չեն բերում անշարժ գույքի վաճառքի մասին ծանուցումն ստանալու օրվանից մեկ ամսվա, իսկ շարժական գույքի վաճառքի մասին՝ տասն օրվա ընթացքում, ապա վաճառողն իրավունք ունի իր բաժինը վաճառել ցանկացած անձի:

Գնելու նախապատվության իրավունքի խախտմամբ բաժնի վաճառքի դեպքում բաժնային սնփականության ցանկացած մասնակից իրավունք ունի նրենք ամսվա ընթացքում դատական կարգով պահանջնել իրեն փոխանցելու գնորդի իրավունքները և պարտականությունները (Զադ. օր. հոդվ. 195):

Եթե բաժինը վաճառվում է նրբորդ անձի, ապա փոփոխվում է միայն համասնփականատերների կազմը, իսկ բաժնետերների իրավունքների փոփոխություն տեղի չի ունենում: Եթե բաժինը ձեռք է բերվում համասնփականատերների կամ նրանցից մեկի կողմից, ապա փոփոխվում է և անդամների կազմը, և՝ սնփականության իրավունքում մասնակիցների բաժինը:

## 2.35. Ի՞նչ խորհուրդ կարելի է տալ բնակելի տուն գնողներին

Նոր բնակարան գնելը միշտ էլ նշանակալից իրադարձություն է յուրաքանչյուրի կյանքում: Սակայն, որպեսզի գնելուց հետո խուսափենք անհարկի խնդիրներից, կարծում ենք, տեղին կլինի հետևյալ խորհուրդը:

Ընդհանրապես, բնակարանի առուվաճառքի գործարքը ենթակա է պարտադիր նոտարական վավերացման, և մինչև վավերացման համար անհրաժեշտ ողջ փաստաթղթերի փաթեները չլինի և նոտարը չստուգի դրանց հավաստիությունը, չի վավերացնի այդ գործարքը: Դա չի խանգարում, սակայն, որպեսզի դուք էլ ձեր ուշադրությունը հրավիրենք մի խնդրի վրա, որն առավել շատ բարդություններ է առաջացնում և ավելի հաճախ է հանդիպում: Դա գնվելիք բնակարանի նկատմամբ օգտագործման իրավունք ունեցող (գրանցված) անձանց ճակատագիրն է:

Գործարքը վավերացնելու համար նոտարի կողմից պահանջվող փաստաթղթերի մեջ է մտնում նաև բնակահագործման տարածքային մարմինների կողմից տրված՝ տվյալ բնակարանում օգտագործման իրավունքը բնակվող (գրանցված) անձանց ցուցակը (տեղեկանքը): Դուք անպայման պետք

է հետևեք, որպեսզի այդ տեղեկանքում նշված բոլոր անձինք դուրս գան գրանցումից, իհարկե, եթե դուք ինքներդ չեք ցանկանում, որ այդ անձինք գրանցված մնան: Եթե գրանցված անձինք ինչ-ինչ օբյեկտիվ կամ սուբյեկտիվ հանգամանքներից նկատվող տվյալ պահին չեն կարող դուրս գալ գրանցումից (օրինակ, զորակոչային տարիքի անձինք, որպեսզի դուրս գան գրանցումից պարտադիր կարգով պետք է մեկ այլ տեղ գրանցվեն, հակառակ դեպքում նրանց գրանցումից չեն հանի) ապա պետք է նոտարական կարգով վավերացված պարտավորություն ստանձնեն՝ այդ իրավունքից իրաժարվելու մասին: Ընդ որում, դա պետք է արվի միայն սեփականության իրավունքի փոխանցելը:

Եթե դուք հիշյալ միջոցները չենքնարկեք, ապա ինչ-ոք ժամանակ կարող են հայտնվել արդեն ձեզ պատկանող բնակարանում գրանցված անձանցից որևէ մեկը կամ բոլորը և պահանջել, որպեսզի դուք թույլ տաք բնակվեն ձեր բնակարանում, այսինքն՝ թույլ տաք իրացնելու ձեր բնակարանի նկատմամբ նրա (նրանց) ունեցած օգտագործման իրավունքը, կամ համարժեք փոխհատուցում պահանջել:

### 2.36. Ինչպես վարվել, եթե պարզի, որ ձեր գույքը ձեր կամքից անկախ հայտնվել է այլ անձի մոտ

Ուրիշի ապօրինի տիրապետումից գույքը հետ պահանջելու ձեր իրավունքը կախված է նրանից, թե այդ գույքը ձեռք բերողը բարեկարգ ձեռքբերող է, թե՝ անբարեկարգ կամ ապօրինի: Մենք կանորադառնաք երկուսին եւ, քանզի գործնականում հաճախ են հանդիպում և՛ մեկը և՛ մյուսը:

Եթե անձը գույքը ձեռք է բերել ոչ թե սեփականատիրոջից, այլ մեկ ուրիշ անձից, և ձեռք բերելիս իմացել է կամ պարտավոր էր իմանալ (այսինքն՝ այդ մասին իմանալը նրանից հատուկ գիտելիքներ կամ հատուկ մասնագիտական փորձ չեր պահանջում), որ այդ գույքն օտարողն այն օտարողն (վաճառելու) իրավունք չուներ, ապա գույքի այդպիսի ձեռքբերողը համարվում է ապօրինի կամ անբարեկարգ ձեռքբերող: Օրինակ, դուք ձեր գույքը հանձնել եք վարձակալության: Վարձակալը վաճառել է այդ գույքը: Գնորդն իմացել է, որ վաճառողը ոչ թե սեփականատերն է, այլ վարձակալը: Այդպիսի գնորդը համարվում է անբարեկարգ ձեռքբերող, և սեփականատերն իր գույքը հետ պահանջելու իրավունք ունի: Կամ սեփականատիրոջ գույքը գողացել են, և գողացողն այն վաճառել է մեկ այլ անձի: Գույքը ձեռք բերողը (գնորդը) իմացել է կամ պարտավոր էր իմանալ, որ գույքը գողացված է (ասենք, գույքը ձեռք է բերել կասկածելի հանգամանքներում և ակնհայտ ցածր գնով): Այս դեպքում ևս ձեռքբերողը համարվում է անբարեկարգ, և սեփականատերը պահպանում է գույքը հետ պահանջելու իր իրավունքը: Մի խոսքով, սեփականատերը բոլոր դեպքերում իրավունք ունի ապօրինի, անբարեկարգ ձեռքբերողից պահանջելու իր գույքը: Ընդ որում, այդպիսի պահանջ սեփականատերը կարող է հարուցել միայն ապօրինի տիրապետողի դեմ, այսինքն՝ այնպիսի տիրապետողի դեմ, որի տիրապետումը իրավական հիմք չունի: Օրինակ, սեփականատերը նման պահանջ չի կարող ներկայացնել գրավորուին, որովհետև նրա տիրապետումն օրինական է:

Բարեկամիացնելու համարվում այն անձը, որը գույքը ձեռք բերելիս չի խմացնել և պարտավոր էլ չէր իմանալ, որ օտարողն իրավասու չէ գույքն օտարելու:

Այս դեպքում ևս գույքի սեփականատերն իրավունք ունի իր գույքը հետ պահանջնելու բարեկամիացնելու համար, սակայն, ի տարբերություն անբարեկամիացնելու համար կարող է կիրառվել որոշ սահմանափակումներով, քանի որ երբեմն անհրաժեշտ է լինում պաշտպանել բարեկամիացնելու համար: Այսպես, եթե գույքն այն օտարելու իրավունք չունեցող անձից անհատույց է ձեռք բերվել, ապա սեփականատերն ամեն դեպքում իրավունք ունի այն հետ պահանջնելու, իսկ եթե գույքը վճարով է ձեռք բերվել այն օտարելու իրավունք չունեցող անձից, ապա գույքը բարեկամիացնելու համար կարելի է հետ պահանջնել միայն այն դեպքում:

1. Եթե գույքը կորցրել է սեփականատերը կամ այն անձը, ում այդ գույքը սեփականատերը հանձնել էր տիրապետման,

2. Եթե գույքը հափշտակվել է նրանցից որևէ մեկից կամ մյուսից,

3. Եթե գույքը, անկախ նրանց կամքից նրանց տիրապետությունից դուրս է եկել այլ ճանապարհով:

Հիշատակված երեք դեպքերում էլ սեփականատերն իրավունք ունի հետ պահանջնելու իր գույքը՝ անկախ որևէ հանգամանքից: Օրինակ, սեփականատերը կորցրել է իր ժամացույցը: Մեկը գտել է այն և նվիրել ուրիշի: Վերջինս վաճառել է այն, իսկ սեփականատերը գտել է իր գույքը գնորդի մոտ: Գնորդը ժամացույցը ձեռք է բերել՝ վճարելով դրա լրիվ գինը, չիմանալով, և պարտավոր էլ չէր իմանալ, որ այդ ժամացույցը վաճառողը դրա սեփականատերը չի եղել: Նշանակում է՝ ժամացույց ձեռքերողը բարեկամիացնելու համար է: Զնայած դրան, ժամացույցը կորցնողն իրավասու է հետ պահանջնելու իր գույքը:

## 2.37. Ո՞ր դեպքերում կարող է բարեկամիացնելու համար սեփականության իրավունք առաջանալ

Եթե գույքը սեփականատիրոջ կամ օրինական տիրապետությունից դուրս է գալիս նրանց կամքով, ապա, որպես կանոն, բարեկամիացնելու համար կարող է սեփականության իրավունք առաջանալ: Օրինակ, եթե սեփականատերն իր գույքը հանձնել է վարձակալության, իսկ վարձակալը վաճառել է այդ գույքը, գնորդն էլ այն ձեռք բերելիս չի խմացնել, որ վաճառողը դրա սեփականատերը չէ, ապա սեփականատերն իրավունք չունի հետ պահանջնել այդ գույքը, որովհետև նա իր գույքը վարձակալին է հանձնել իր կամքով, իսկ վարձակալը չարաշահել է այդ վստահությունը: Այս դեպքում սեփականատերը վարձակալից կարող է պահանջնել իրեն հասցված վնասի հատուցումը:

Չի թույլատրվում նաև վերը նշված հիմքով գույքը հետ պահանջնել, եթե այն վաճառվել է՝ ի կատարումն դատական վճռի: Նման դեպքերում գույքը սեփականատիրոջ տիրապետությունից դուրս է գալիս օրենքով նախատեսված դեպքերում ու կարգով, և բարեկամիացնելու հետ պահանջվել չի կարող նույնիսկ հետագայում այդ գույքը վերգրված իրերի գուցակից հանելու դեպքում:

Համաձայն ՀՀ քաղ. օր. 275-րդ հոդվածի, դրամը, ինչպես նաև ներկայացուցական արժեթղթենքը չեն կարող հետ պահանջվել բարեխիղճ ձեռքբերողից: Օրինակ, քաղաքացին կորցրել է իր դրամափային վիճակախաղի տումար: Մեկ ուրիշը գտնել է այդ տումար և վաճառել երրորդ անձի: Եթե արժեթղթուղթը ներկայացվի խնայքանկ՝ վճարման, խնայքանկն իրավունք չունի այն չվճարել՝ պատճառաբանելով, որ գնված է կորցրած արժեթղթուղթը:

Մի կարևոր հանգամանք ևս. ուրիշի ապօրինի տիրապետումից գույքը հետ պահանջնելու հայցը ենթակա է հայցային վաղեմության ներգործությանը: Այսինքն՝ սեփականատենքն ապօրինի տիրապետողի դեմ հայցը պետք է հարուցի վաղեմության ժամկետի ընթացքում (3 տարի): Եթե սեփականատենքը հայցային վաղեմության ժամկետի ընթացքում հայց չի հարուցում, ապա կարող է զրկվել իր սեփականության իրավունքի հարկադրական պաշտպանություն ստանալու հնարավորությունից:

### 2.38. Սեփականատենքն ուրիշի ապօրինի տիրապետումից գույքը հետ պահանջնելիս ինչպիսի՝ պահանջներ ևս կարող է ներկայացնել

Ուրիշի ապօրինի տիրապետումից գույքը հետ պահանջնելիս հաճախ անհրաժեշտություն է առաջանում հաշվարկներ կատարել սեփականատիրոջ և ապօրինի տիրապետողի միջև:

Գույքը հետ պահանջնելի՝ սեփականատենքն իրավունք ունի անբարեխիղճ տիրապետողից պահանջնել վերադարձնելու կամ հատուցնելու նաև այն բոլոր նկամուտները, որոնք այդ անձն ստացել է կամ կարող էր ստանալ գույքի ապօրինի տիրապետման ամբողջ ժամանակամիջոցում: Իսկ բարեխիղճ ձեռքբերողից պահանջնել այն բոլոր նկամուտները, որ նաև ստացել է կամ պարտավոր էր ստանալ այն ժամանակից ի վեր, եթե իմացել է կամ պարտավոր էր իմանալ, որ գույքն անհիմն է իրեն պատկանում, կամ երբ ծանուցում է ստացել գույքը վերադարձնելու վերաբերյալ սեփականատիրոջ հայցով (Քաղ. օր. հոդվ. 276):

Սակայն, հարկ է նկատի ունենալ, որ սեփականատենքը կարող է պահանջնել այն նկամուտները, որոնք ստացել կամ պարտավոր էր ստանալ ապօրինի ձեռքբերողը, այսինքն՝ սեփականատենքը կարող է պահանջնել միայն իրական նկամուտները, եթե իմանավորի, որ այդպիսիք օբյեկտիվորեն պետք է ստացվենին:

### 2.39. Ուրիշի ապօրինի տիրապետումից գույքը հետ պահանջնելիս՝ սեփականատենքը պարտավո՞ր, է արդյոք, հատուցել գույքի պահպանման ծախսենք

Ինչպես բարեխիղճ, այնպես էլ անբարեխիղճ տիրապետողն իրավունք ունեն սեփականատիրոջից պահանջնելու հատուցել գույքի պահպանման համար

Կատարված անհրաժեշտ ծախսները՝ այն պահից ի վեր, երբ գույքից ստացված նկամուտներն անցնելու են սնվականատիրոջը:

Օրենքում նշված չէ, թե ինչ պետք է հասկանալ անհրաժեշտ ծախսներ ասելով, և որոնք են այդ ծախսները: Սակայն դատական պրակտիկայի ուսումնախրությունները հիմք են հանդիսանում եզրակացնելու, որ տվյալ դեպքում որպես անհրաժեշտ ծախսներ պետք է հասկանալ այն ծախսները, որոնք անհրաժեշտաբար պետք է կատարվեն գույքը պատշաճ վիճակում պահելու համար: Այդպիսիք են, օրինակ, ընթացիկ և հիմնական նորոգման համար կատարվող ծախսները, գույքը սարքին վիճակում պահելու համար կատարվող անհրաժեշտ ծախսները:

Եթե բարեխիղձ տիրապետողը կատարել է գույքի բարելավումներ, և գույքը նրանից հետ է վերցվում, ապա նա իրավունք ունի իրեն թողնելու իր կատարած բարելավումները, եթե դրանք կարելի է առանձնացնել առանց՝ գույքին վնաս պատճառելու:

Եթե բարելավումների այդպիսի առանձնացումն անհնարին է, ապա բարեխիղձ տիրապետողն իրավունք ունի պահանջելու բարելավման համար կատարած ծախսների հատուցում, բայց ոչ ավելի այն չափից, որով ավելացնել է գույքի արժեքը: Անբարեխիղձ տիրապետողն այդպիսի իրավունք չունի: Նրանից գույքը վերցնելիս՝ առանց հատուցման սնվականատիրոջն են անցնում բոլոր բարելավումները, եթե վերջինները չի կարելի գույքից անջատել առանց գույքին վնաս պատճառելու:

#### 2.40. Ո՞ր դեպքերում է դադարում քաղաքացու սնվականության իրավունք՝ նրա կամքից առկախ կամ նրա կամքին հակառակ

Ընդհանրապես, սնվականության իրավունքն անժամկետ իրավունք է: Չնայած դրան, այդ իրավունքը որոշակի հանգամանքներում կարող է դադարել՝ սնվականատիրոջ կամքից անկախ կամ նրա կամքին հակառակ: Այդպիսի դեպքերից է ռեկվիզիցիան: Համաձայն «Հ քաղաքացիական օրենսգրքի 285-րդ հոդվածի, տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների դեպքում և արտակարգ բնույթ կրող այլ իրավիճակներում գույքը կարող է օրենքով սահմանված պայմաններով ու կարգով, պետական մարմինների որոշմամբ, ի շահ հասարակության վերցվել սնվականատիրոջից՝ դրա արժեքը վճարելու պայմանով: Օրինակ, եթե ձեր անասունը վարակված է վտանգավոր վարակիչ հիվանդությամբ, ապա պետությունը կարող է օրենքով սահմանված կարգով ու պայմաններով ձեզանից վերցնել այդ անասունը՝ վնասազերծելու նպատակով: Նման դեպքերում պետությունը պարտավոր է ձեզ վճարել անասունի շոկայական գինը: Եթե դուք համաձայն չեք այն գնի հետ, որ վճարում է պետությունը, ապա կարող եք դիմել դատարան և վիճարկել հարկադրաբար վերցված գույքի հատուցման արժեքը ( Քաղ. օր. հոդվ. 285, կետ 2-րդ):

Սնվականատիրոջ կամքին հակառակ գույքի սնվականության իրավունքի դադարման ամենատարածված ձևերից է սնվականատիրոջ

պարտավորությունների համար նրա գույքի վրա բռնագանձում տարածելը: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 281-րդ հոդվածի համաձայն սեփականատիրոջ պարտավորությունների համար նրան պատկանող գույքի վրա բռնագանձում կարող է տարածվել դատարանի վճռով, եթե պայմանագրով բռնագանձում տարածելու այլ կարգ նախատեսված չէ:

Սեփականատիրոջ պարտավորություններով գույքի վրա բռնագանձում տարածելը կատարվում է ծայրահետի դեպքերում, եթե պարտապանը պարտը մարելու համար դրամական միջոցներ չունի, կամ եթե պարտավորության կատարումն ապահովված է զրավականով:

Քաղաքացու սեփականության իրավունքը նրա կամքից անկախ դադարում է նաև, եթե օրենքով թույլատրվող հիմքերով անձին որպես սեփականություն անցել է այնպիսի գույք, որն օրենքի ուժում չի կարող նրան պատկանել: Որպես այդպիսիք կարող են լինել գույքի այն տեսակները, որոնք օրենքներով կամ այլ օրենսդրական ակտերով չեն կարող մասնավոր սեփականության իրավունքով պատկանել ֆիզիկական կամ իրավաբանական անձանց: Սեփականատերն այդ գույքը պետք է օտարի դրա նկատմամբ սեփականության իրավունքի ծագման պահից մեկ տարվա ընթացքում, եթե օրենքով այլ ժամկետ նախատեսված չէ:

Այն դեպքում, եթե սեփականատերը սահմանված ժամկետում գույքը չի օտարում, ապա, հաշվի առնելով այդ գույքի բնույթն ու նշանակությունը, պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի դիմումի հիման վրա կայացված դատարանի վճռով գույքը նճթակա է հարկադիր վաճառքի՝ ստացված գումարը նախկին սեփականատիրոջը հանձնումով: Ընդգծենք, որ բոլոր դեպքերում սեփականատիրոջ գումարը վերադարձվում է՝ դրանից հանելով միայն օտարման ծախսերը:

Եթե օրենքով թույլատրվող հիմքերով քաղաքացու մոտ կհայտնվի այնպիսի գույք, որի ձեռքբերման համար անհրաժեշտ է հատուկ թույլտվություն, և այդպիսին ստանալը սեփականատիրոջը մերժվել է, ապա այդ գույքը նճթակա է օտարման՝ վերը նշված կարգով:

Սեփականատերն իր կամքին հակառակ կարող է զրկվել իր անշարժ գույքից՝ հողամասը նրանից հետ զնելու դեպքում: Այսպես, եթե անհնարին է հողամասը պետության կամ համայնքի կարիքների համար վերցնելը՝ առանց դրանում գտնվող շենքերի, շինույթունների և այլ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի դադարեցման, ապա պետությունն այդ գույքը կարող է վերցնել սեփականատիրոջից: Անշարժ գույքը վերցնելու մասին պահանջը նճթակա է քավարարման, եթե դատարան դիմած մարմինը ապացուցում է, որ հողամասի օգտագործումն այն նպատակով, որի համար վերցվում է, անհնարին է առանց տվյալ անշարժ գույքի նկատմամբ իրավունքը դադարեցնելու:

Անփութորեն պահիող առանձնապես արժեքավոր և պետության կողմից պահպանվող մշակութային արժեքները ևս դատարանի վճռով կարող են վերցվել քաղաքացու սեփականությունից՝ անկախ նրա կամքից կամ նրա կամքին հակառակ: Նման դեպքերում պետությունը հատուցում է դրանց գինը:

## 2.41. Կարո՞ղ է, արդյոք, պետությունը քաղաքացուն զրկել հողի սեփականության իրավունքից, եթե տվյալ քաղաքացին որևէ հակաիրավական արարք չի գործել

Այս, կարող է: Համաձայն ՀՀ քաղ. օր. 218-րդ հոդվածի հոդամասը սեփականատիրոջից կարող է վնրցվել պետության կամ համայնքների կարիքների համար՝ դրա գինը հատուցելու միջոցով: Պետության կամ համայնքի կարիքների համար հոդամասը վերցնելու մասին որոշումն ընդունում է պետական մարմինը: Թե ո՞րն է այն պետական մարմինը, որը նման որոշում կայացնելու լիազորություն ունի, և ինչպիսին է նման որոշման նախապատրաստման և ընդունման կարգը, սահմանվում են օրենքով: Այսինքն՝ զանկացած պետական մարմին չէ, որ կարող է նման որոշում կայացնել: Դա նշանակում է, որ եթե մի օր ձեզ ներկայացնեն որոշում՝ ձեր հոդամասը պետության կամ համայնքի կարիքների համար վերցնելու մասին, ապա դուք անպայման հավաստիացնք, թե ով է կայացրել այդ որոշումը, որ օրենքի հիման վրա, և, արդյոք, այդ օրենքով նա իրավունք ուներ նման որոշում կայացնելու, և, վերջապես, պահպանվել է, արդյոք, օրենքով նախատեսված որոշման նախապատրաստման և ընդունման կարգը:

Հոդամասը վերցնելու մասին որոշում ընդունած պետական մարմինը պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել հոդամասի սեփականատիրոջը: Պետության կամ համայնքի կարիքների համար վերցվող հոդամասի հատուցման գինը, ժամկետները և մյուս պայմանները սահմանվում են հոդամասի սեփականատիրոջ համաձայնությամբ: Ընդ որում, ավելորդ չէ մեկ անգամ ևս հիշեցնել, որ, ամեն դեպքում, երբ խոսքը վերաբերում է քաղաքացու սեփականության՝ նրա կամքից անկախ կամ նրա կամքին հակառակ օտարման մասին, պետք է հիշել ՀՀ Սահմանադրության 28 հոդվածի երկրորդ մասը, համաձայն որի՝ «Սեփականության օտարումը հասարակության և պետության կարիքների համար կարող է կատարվել միայն քացարիկ դեպքերում, օրենքի հիման վրա՝ նախնական համարժեք փոխհատուցմամբ»: Առաջին երկու պայմանների, այսինքն՝ օտարման դեպքերի և օտարումն օրենքով կատարելու մասին արդեն խոսվել է: Ինչ վերաբերում է «նախնական համարժեք փոխհատուցմանը », ապա դա նշանակում է, որ քանի դեռ պետության կամ համայնքի և քաղաքացու միջև լուծված չեն համարժեք հատուցման չափերը, պայմաններն ու կարգը, քաղաքացու գույքը չի կարող օտարվել: Ավելին, գույքը կամ հոդամասը կարող է օտարվել միայն նախնական փոխհատուցմամբ, այսինքն՝ մինչև պայմանավորված գումարը չվճարվի, ոչ ոք չի կարող քաղաքացուն զրկել իր սեփականությունից:

Հոդամասի գինը որոշելիս՝ դրա մեջ հաշվանցվում են հոդամասի և դրանում գտնվող անշարժ գույքի շուկայական արժեքը, ինչպես նաև հոդամասը վերցնելու հետևանքով սեփականատիրոջը պատճառված բոլոր վնասները, որը նա կրում է՝ կապված երրորդ անձանց առջև իր պարտավորությունների վաղաժամկետ դադարման հետ, ներառյալ բաց թողնված օգուտը (Քաղ. օր. հոդվ. 219 2-րդ կետ): Օրինակ, եթե պետության կամ համայնքի կարիքների համար պետք է օտարվի ձեր պտղատու այգին, իսկ դուք երրորդ անձանցից արդեն կանխավճար եք ստացնել բնրքը նրանց

հանձնելու համար, ապա պետությունը պետք է հատուցի ոչ միայն այզու (հողամասի) արժեքը այլ նաև երրորդ անձանց առջև ձեր ստանձնած պարտավորությունները չկատարելու հետևանքով կրած վնասներն ու բաց թողնված օգուտը:

Պետության կամ համայնքի կարիքների համար վերցվող հողամասի փոխարեն սեփականատիրոջ համաձայնությամբ նրան կարող է տրամադրվել այլ հողամաս՝ հատուցման զնի մեջ դրա արժեքի հաշվանցումով:

Քաղաքացին կարող է չհամաձայնել հողամասն իրենից վերցնելու որոշման, հատուցման զնի կամ հատուցման այլ պայմանների հետ: Նման դեպքերում որոշումը ընդունած պետական մարմինը կարող է հողամասը վերցնելու մասին հայց հարուցել դատարան: Մինչև հատուցման վերաբերյալ համաձայնության գալը կամ այդ մասին դատարանի վճի կայացումը հողամասի սեփականատիրը կարող է այդ հոդի նշանակությանը համապատասխան տիրապետել, օգտագործել և տնօրինել հողամասը: Օտարվող հողամասի հատուցման գինը որոշելու ընթացքում այդ հողամասում սեփականատիրոջ կատարած նոր շինարարության, շինությունների ընդլայնման ու վերակառուցման հետ կապված ծախսների և վնասների ռիսկը կրում է սեփականատիրը: Դա նշանակում է, որ ձեզ կարող է չհատուցվել նոր շինության համար կատարած ծախսները:

## 2.42. Ի՞նչ է նշանակում գույքի հավատարմագրային կառավարում

Գույքի հավատարմագրային կառավարումը «Հ օրենսդրության համար համեմատաբար նոր ինստիտուտ է» (Քաղ. օր. հոդվ. 163-րդ, կնտ 4-րդ): Համաձայն դրա՝ սեփականատիրն իրավունք ունի իր հայեցողությամբ իր գույքն հանձնել հավատարմագրային կառավարման՝ այն ավելի արդյունավետ օգտագործելու նպատակով: Գույքը հավատարմագրային կառավարման հանձնելը չի հանգեցնում սեփականության իրավունքի փոխանցման: Գույքի հավատարմագրային կառավարումն իրականացվում է պայմանագրի կամ օրենքի և այլ իրավական ակտերի (օր., հոգաբարձության կամ խնամակալության) հիման վրա: Հավատարմագրային կառավարիչը պարտավոր է գույքը կառավարել ի շահ սեփականատիրոջ:

## §3. Սեփականության իրավունքի պաշտպանությունը

### 3.1. Ինչպես վարվել, եթե ձեր հողամաս տանող միակ ճանապարհն անցնում է հարևանի հողամասի տարածքով, իսկ հարևան արգելում է օգտվել այդ տարածքից:

Նման դեպքերում, իսկ այդպիսիք քիչ չեն, դուք իրավունք ունեք հարևան հողամասի սեփականատիրոջից պահանջել, որպեսզի Ձեզ տրամադրի իր

հողամասի սահմանափակ օգտագործման իրավունք (սերվիտուտ): Հնդ որում, նման պահանջ կարող եք դնել ոչ միայն հողամաս ելումուտ անելու համար: Համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 50-րդ հոդվածի՝ «Հողամասը կարող է ծանրաբեռնվել հետևյալ սերվիտուտներով»

1. հողամասով անցնելու կամ երթևեկնելու համար.
2. հողամասով էլեկտրահաղործման, կապի գծերի ջրամատակարարման և զազամատակարարման խողովակաշարների անցկացման, շահագործման և վերանորոգման համար,
3. այլ հողամասի հողի բարեկավման նպատակով հողում դրենաժային աշխատանքներ կատարելու համար.
4. հողամասից ջուր վերցնելու համար.
5. հողամասով անասուններ անցկացնելու, խոտինձի, անասուններ արածացնելու համար՝ տեղական պայմաններին և սովորույթներին համապատասխան ժամանակահատվածում.
6. հողամասում ինչպես մասնավոր, այնպես էլ հանրության համար անհրաժեշտ հետազոտման և այլ աշխատանքներ իրականացնելու համար.
7. հողամասի սահմաններում գտնվող գեղեցիկական կետերին, պատմության, մշակութային և հնագիտական հուշարձաններին անարգել մոտենալու իրավունք.
8. իր հողամասի շենքերը, շինությունները սահմանակից հողամասի կամ դրանում նույնականացնելու համար շենքերի, շինությունների վրա հենվելու կամ որոշակի բարձրությամբ հարևան հողամասի վրա կանխելու համար.
9. սահմանակից հողամասում շենքերի, շինությունների բարձրությունը սահմանափակելու համար.
10. սահմանակից հողամասում պաշտպանական անտառատնկարկների կամ այլ բնապահպանական օբյեկտներ ստեղծելու համար.
11. այլ սերվիտուտներ, առանց որոնց անհնարի է բավարարել հողամասն իր նշանակությամբ օգտագործելու համար անհրաժեշտ պահանջները»:

Հողամասը սերվիտուտով ծանրաբեռնելը հողամասի սեփականատիրոջը չի զրկում այդ հողամասի տիրապետման, օգտագործման և տնօրինման իրավունքից:

Սերվիտուտը պետք է հնարավիրինս նվազ ծանրաբեռնի հողամասը:

Սերվիտուտով ծանրաբեռնված հողամասի սեփականատերն իրավունք ունի վարձավճար պահանջնելու այն անձանցից, ի շահ որոնց սահմանվել է սերվիտուտը, եթե օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ:

Իսկ եթե ձեր հարևանը չի կամենում իր հողամասի սահմանափակ օգտագործման իրավունք տրամադրել ձեզ, կամ էլ տրամադրում է, բայց այնպիսի պայմանով, որին դուք չեք կարող համաձայնել, ապա կարող եք դատարան դիմել և դատարանի միջոցով պահանջնել այդ իրավունքը: Դատարանը, եթե իիմնավորված համարի ձեր պահանջը, վճիռ կկայացնի՝ նշելով սերվիտուտի գործողության ժամկետները և պայմանները: Եթե դուք որևէ խնդիր չունեք՝ կապված ձեր հարևանի հողամասի սահմանափակ օգտագործման հետ, ապա դուք պետք է պայմանագիր կնքեք նրա հետ և

նոտարական կարգով վավերագննք այն: Այդ իրավունքը ննջակա է պարտադիր պնտական գրանցման, այսինքն՝ նոտարական կարգով վավերացնելուց հետո կամ դատարանի կողմից վճռի կայացումից հետո մեկ ամսվա ընթացքում դուք պետք է համապատասխան պնտական մարմիններում գրանցեք այդ պայմանագիրը, որպեսզի այն իրավաբանական ուժ ունենա:

Չեր սերվիտուտի իրավունքը պահպանվում է նաև այն դեպքում, եթե ձեր հարևանը վաճառի կամ որևէ այլ կերպ օտարի իր հաղամասը: Սերվիտուտը չի կարող ինքնուրույն գործարքի առարկա լինել, այսինքն՝ չի կարելի այն վաճառել, գրավ դնել, նվիրել և այլն:

### 3.2. Ե՞րբ է դադարում սերվիտուտը

ՀՀ քաղ. օր. 216-րդ հոդվածով սերվիտուտի, այսինքն՝ ուրիշի հոդամասի սահմանափակ օգտագործման իրավունքի դադարման երկու դեպք է նախատեսված: Առաջին դեպքում քաղաքացին կարող է պահանջնել դադարեցնել սերվիտուտը, եթե վերացել են դրա սահմանման հիմքնը, օրինակ, եթե հոդամաս բերող մեկ այլ ինքնուրույն ճանապարհ է գոյացնել: Երկրորդ դեպքում քաղաքացին կարող է պահանջնել վերացնելու սերվիտուտը, եթե նրա հոդամասը սերվիտուտով ծանրաբեռնված լինելու հետևանքով չի կարող օգտագործվել իր նշանակությանը համապատասխան: Վերջին դեպքում քաղաքացին սերվիտուտի իրավունքի վերացման հայցով պետք է դիմի դատարան ( Քաղ. օր. հոդվ. 216 ):

### 3.3. Իրավունք ու՞նի, արդյոք, գրավառուն (պարտատերը) պահանջնել, որպեսզի բռնագանձումը տարածեն նաև գրավառուի (պարտապանի) այլ գույքի վրա, եթե գրավի իրացումից ստացված գումարը բավարար չէ պարտքը մարելու համար

Այս, նման իրավունք գրավառուն ունի: Համաձայն ՀՀ քաղ. օր. 251-րդ հոդվածի երկրորդ կետի՝ «Եթե գրավ դրված գույքն իրացնելուց ստացված գումարը բավարար չէ գրավառուի պահանջները բավարարելու համար, նա իրավունք ունի պակաս գումարն ստանալ պարտապանի այլ գույքից, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով»: Այսինքն, եթե դուք գանկանում եք, որպեսզի գրավառուն բավարարվի միայն գրավադրված գույքով, ապա այդ մասին նախօրոք պետք է նշեք ձեր և գրավառուի միջև կնքվող գրավի պայմանագրում:

### **3.4. Իրավունք ունի, արդյոք, գրավառուն առանց դատարանի վճռի բռնագանձնելու գրավադրված գույքը**

Այս, ունի: Ըստ ՀՀ քաղ. օր. 249-րդ հոդվածի առաջին մասի, գրավ դրված գույքի հաշվին գրավառուի պահանջներն առանց դատարան դիմունու բավարարել թույլատրվում է գրավառուի և գրավառուի միջև կնքված ունտարական կարգով վավերացված համաձայնության հիման վրա:

Որոշ դեպքերում գրավի առարկայի վրա բռնագանձում կարելի է տարածել միայն դատարանի վճռով: Իրանք այն դեպքերն են, երբ՝ առաջին գրավի պայմանագիր կնքելու համար պահանջվել է այլ անձի համաձայնություն կամ թույլտվություն (օրինակ, բնակարանում գրանցված անձանց թույլտվությունը՝ իհպոթեքի պայմանագրի դեպքում), և, երկրորդ գրավի առարկան հանրության համար նշանակալից պատմական, գեղարվեստական կամ մշակութային արժեք ներկայացնող գույք է:

### **3.5. Կարո՞ղ է, արդյոք, գրավառուն վաճառել գրավադրված գույքը**

Այս, կարող է, բայց որոշակի սահմանափակումներով: Այսպես, եթե գրավառուն ցանկանում է վաճառել, նվիրել, վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնել կամ այլ կերպ տնօրինել իր գույքը, ապա պարտավոր է ստանալ գրավառուի համաձայնությունը, եթե, իհարկե, օրենքով կամ պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Առանց այդ համաձայնության նա չի կարող տնօրինել իր գույքը: Ընդ որում, ասենք, որ գրավի առարկայի սեփականատիրոջ փոփոխությունից գրավի իրավունքը չի դադարում:

Պետք է ավելացնել, որ գրավառուն ամեն դեպքում կարող է կտակել իրեն պատկանող գրավադրված գույքը, և այս առումով նրա այդ իրավունքը սահմանափակող ցանկացած համաձայնություն առոչինչ է (Քաղ. օր., հոդվ. 238, 3-րդ մաս):

### **3.6. Գրավի սեփականատիրոջ փոփոխման դեպքում դադարու՞մ է, արդյոք, գրավի իրավունքը, թե՞ ոչ**

Գրավի սեփականատիրոջ փոփոխման դեպքում գրավի իրավունքը չի դադարում: Ինչպես նշված է ՀՀ քաղ. օր. 242-րդ հոդվածի 1-ին կետում՝ «Գրավ դրված գույքը հատուցմամբ կամ անհատույց օտարելիս կամ համապարփակ իրավահաջորդության կարգով այդ գույքի նկատմամբ գրավառուի սեփականության իրավունքն այլ անձի անցնելիս գրավի իրավունքը պահպանում է իր ուժը»: Ավելին, գրավառուի իրավահաջորդն

գրադադարում է գրավատուի տեղը և կրում նրա բոլոր պարտականությունները, եթե այլ բան նախատեսված չէ գրավառուի հետ համաձայնությամբ:

Այն դեպքում, եթե գրավի առարկա գույքն իրավահաջորդության կարգով անցնել է մի բանի անձի, իրավահաջորդներից յուրաքանչյուրը նշված գույքից իրեն անցած բաժնին համաչափ կրում է գրավով ապահովված պարտավորությունը չկատարելուց բխող բոլոր հետևանքները: Եթե գրավի առարկան անբաժանելի է կամ այլ հիմքերով մնում է իրավահաջորդների ընդհանուր սեփականության ներքո, նրանք դառնում են համապարտ գրավատուներ (Քաղ. օր., հոդվ. 242, 2-րդ կետ):

### 3.7. Կարո՞ղ է, արդյոք, գրավատուն օգտագործել իր կողմից գրավադրված գույքը

Ինչպես նշված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 238-րդ հոդվածում, գրավառուն իրավունք ունի օգտվելու գրավի առարկայից՝ դրա նշանակությանը համապատասխան, այդ թվում՝ դրանից ստանալ պատուիներ և եկամուտներ, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով: Այստեղ հարկ է փոքր-ինչ կանգ առնել «եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով» հասկացության վրա, քանի որ օրենսդրության մեջ այն հաճախ է հանդիպում: Վերոհիշյալ հասկացության իմաստով օրենսդիրն ազատություն է տալիս պայմանավորվող կողմներին՝ պայմանագիր կնքելիս ինքնուրույն որոշել իրենց իրավունքների և պարտականությունների ծավալը: Եթե կողմերը պայմանագրում ոչինչ չեն նշում, ապա միայն այդ դեպքում կիրառվում է օրենքի դրույթը:

Պետք է հիշել, սակայն, որ գրավատուն կրում է գրավ դրված գույքի պատահական ոչնչացման, կորստի կամ պատահական վնասվածքի ռիսկը, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

### 3.8. Կարո՞ղ է, արդյոք, գրավատուն մարել իր պարտավորությունները և գրավը հետ վերցնել՝ դատարանի կողմից գրավի վրա բռնագանձում տարածելու մասին վճիռն ուժի մեջ մտնելուց հետո

Համաձայն ՀՀ քաղ. օր. 252-րդ հոդվածի, պարտապանը կամ երրորդ անձ հանդիսացող գրավատուն իրավունք ունի, մինչև գրավի առարկան վաճառելը, ցանկացած ժամանակ դադարեցնել դրա վրա բռնագանձումը և դրա իրացումը՝ կատարելով գրավով ապահովված պարտավորությունը կամ դրա այն մասը, որի կատարումը կետանցվել է: Դա նշանակում է, որ պարտապանը կամ գրավատուն կարող են դադարեցնել գրավի առարկայի իրացումը ոչ միայն դատարանի վճիռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո, այլև այն դեպքում, եթե դատական ակտերի հարկադիր կատարման

մարմիններն արդեն համապատասխան միջոցներ են ձեռնարկել և գույքը վաճառքի համար աճուրդի են ներկայացրել, անզամ որոշել են աճուրդի օրը:

Գրավ դրված գույքի բռնազանձման կամ իրացման դադարեցում պահանջող անձը, պարտավոր է գրավառության հատուցել այդ գույքի վրա բռնազանձում տարածելու և այն իրացնելու կապակցությամբ կրած ծախսերը:

## § 4. Վարձակալության իրավունք

### 4.1. Ի՞նչ ձևով է կնքվում վարձակալության պայմանագիրը և արդյո՞ք այն ննթակա է պետական գրանցման

Ցանկացած գույքի վարձակալության պայմանագիրը կնքվում է գրավոր ձևով, սակայն ոչ բռլոր պայմանագրերն են ննթակա նոտարական կամ պետական գրանցման: Նոտարական վավերացման են ննթակա անշարժ գույքի վարձակալության պայմանագրերը, իսկ դրանցից ծագող իրավունքները ննթակա են պարտադիր պետական գրանցման: Սակայն, եթե զգուշությունից ենթակա ցանկանում եք նոտարական վավերացման ներկայացնել նաև շարժական գույքի վարձակալության պայմանագրերը, ապա կարող եք այդ պայմանագիրը ներկայացնել նոտարին և նրանից պահանջնել վավերացնել այն: Նոտարը չի կարող մերժել այդ պահանջը, քանի որ ՀՀ քաղ. օր. 299-րդ հոդվածի 3-րդ կետի 2-րդ ննթակենտի համաձայն՝ գործարքի նոտարական վավերացումը պարտադիր է, եթե կողմնորից մնկը պահանջում է դա, թեկուզ օրենքով տվյալ տեսակի գործարքների համար այդ ձևով չի պահանջվում:

### 4.2. Ո՞վ է պատասխանատվություն կրում վարձակալության հանձնված գույքի թերությունների համար

Վարձակալության հանձնված գույքի օգտագործմանը լրիվ կամ մասնակիորեն խոչընդոտող թերությունների համար պատասխանատվություն է կրում վարձատուն, եթե նոյնիսկ վարձակալության պայմանագիրը կնքելիս նա տեղյակ չի եղել այդ թերությունների մասին:

Այդպիսի թերությունների հայտնաբերման դնապրում, վարձակալն իրավունք ունի վարձատուից պահանջներու անհատույց վերացնել գույքի թերությունները կամ համաշափորեն իշեցնել վարձավճարը, կամ հատուցել գույքի թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերը, կամ վարձատուին նախապես տեղեկացնելով՝ վարձավճարից պահել տվյալ թերությունները վերացնելու համար կատարած իր ծախսերի գումարը: Եթե

Վարձակալը չի ցանկանում հիշատակված գործողություններից որևէ մեկը կատարել, ապա նա կարող է պարզապես վաղաժամկետ լուծարել վարձակալության պայմանագիրը:

Պետք է հիշել, սակայն, որ վարձատուն պատասխանատվություն չի կրում վարձակալության հանձնված գույքի այն թերությունների համար, որոնք նա նշել է պայմանագիրը կնքելիս, կամ նախապես հայտնի են եղել վարձակալին, կամ պետք է վարձակալի կողմից հայտնաբերվելին գույքը զննելիս կամ պայմանագիր կնքելիս, կամ գույքը վարձակալության հանձնելիս դրա սարքինությունն ստուգելիս:

### 4.3. **Ո՞վ է կրում գույքի հիմնական վերանորոգման պարտականությունը**

Եթե այլ բան նախատեսված չէ օրենքով, այլ իրավական ակտերով կամ վարձակալության պայմանագրով, ապա վարձակալության հանձնված գույքի հիմնական վերանորոգումը կատարում է վարձատուն՝ իր հաշվին:

Հիմնական վերանորոգումը կատարվում է պայմանագրով որոշված ժամկետում, իսկ եթե պայմանագրով այն որոշված չէ կամ առաջացել է անհետաճգելի անհրաժեշտությամբ, ապա՝ ողջամիտ ժամկետում: Ընդհանրապես, նման անհրաժեշտությունը ծագում է վթարների և այլ նախատեսված հանգամանքների հետևանքով:

Վարձակալության հանձնված բնակելի տարածության հիմնական վերանորոգումը ևս վարձատուի պարտականությունն է, եթե այլ բան նախատեսված չէ բնակելի տարածության վարձակալության պայմանագրով: Հիմնական վերանորոգումը՝ բնակելի տարածքի կրող կոնստրուկցիաների և դետալների, հատակի, տանիքի, սանհանգույցի, գազի և էլեկտրական սարքավորումների, պատերի և միջնապատերի քանդման, վերակառուցման, վերանախազման հետ կապված աշխատանքներն են:

Վարձատուն պարտավոր է հիմնական վերանորոգում կատարել նաև այն դեպքում, եթե հիմնական վերանորոգման անհրաժեշտությունն առաջացել է վարձակալի մեջքով: Սակայն այս դեպքում վարձատուն հիմնական վերանորոգումը կատարում է արդեն վարձակալի հաշվին:

Եթե վարձատուն խախտի հիմնական վերանորոգում կատարելու իր պարտականությունը, ապա վարձակալն իրավունք ունի իր հայնցողությամբ.

1. կատարել պայմանագրով նախատեսված կամ անհետաճգելի անհրաժեշտությամբ ծագած հիմնական վերանորոգում և վարձատուից պահանջել վերանորոգման արժեքը կամ այն հաշվարկել վարձավճարի հաշվին,

2. պահանջել համապատասխան չափով նվազնելու վարձավճարը.

3. պահանջել լուծարելու պայմանագիրը և հատուցնելու վնասները:

Անձնակազմով տրանսպորտային միջոցի վարձակալության պայմանագրի ամբողջ ժամկետի ընթացքում վարձատուն պարտավոր է ապահովել վարձակալության հանձնված տրանսպորտային միջոցի պատշաճ վիճակը: Այդ կանոնը ներառում է տրանսպորտային միջոցի

ընթացիկ և հիմնական վերանորոգումն ու անհրաժեշտ պատկանելիքներ տրամադրելը:

Առանց անձնակազմի տրանսպորտային միջոցի վարձակալության պայմանագրի ամբողջ ժամկետի ընթացքում վարձակալը պարտավոր է ապահովել վարձակալած տրանսպորտային միջոցի պատշաճ վիճակը: Այդ պարտականությունը ներառում է տրանսպորտային միջոցի ընթացիկ և հիմնական վերանորոգումն ու անհրաժեշտ պատկանելիքներ տրամադրելը, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով (Քաղ. օր., հոդվ. 647):

Վարձակալը պարտավոր է գույքը պահպանել պատշաճ վիճակում, իր հաշվին կատարել դրա ընթացիկ վերանորոգումը և կրել գույքը պահպանելու ծախսերը, եթե օրենքով կամ վարձակալության պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Նույնը վերաբերում է նաև բնակելի տարածության վարձակալության պայմանագրին, սակայն վարձակալն իրավունք չունի առանց վարձատուի համաձայնության կատարել բնակելի տարածության վերակառուցում և վերափոխում:

#### **4.4. Դադարու՞մ է, արդյոք, վարձակալության պայմանագիրը, երբ փոխվում է դրա կողմերից որևէ մեկը**

Ոչ, չի դադարում: Համաձայն ՀՀ քաղ. օր 619-րդ հոդվածի առաջին կետի, վարձակալության հաճանված գույքի նկատմամբ սեփականության իրավունքն այլ անձի փոխանցելը հիմք չէ վարձակալության պայմանագիրը լուծելու կամ փոփոխելու համար:

Անշարժ գույք վարձակալած քաղաքացու մահվան դեպքում վարձակալության պայմանագրով նրա իրավունքները և պարտականությունները փոխանցվում են ժառանգին, եթե օրենքով կամ պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

Վարձատուն իրավունք չունի մերժել այդպիսի ժառանգին պայմանագրի կողմ դառնալու մնացած ժամկետում, քացառությամբ այն դեպքի, երբ պայմանագիր կնքելը պայմանագրոված է եղել վարձակալի անհատական հատկանիշներով:

Զքաղնցրած բնակելի տարածության նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումը հիմք չէ բնակելի տարածության վարձակալության պայմանագիրը լուծելու կամ փոփոխելու համար: Այդ դեպքում նոր սեփականատերը վարձատու է դառնում նախկինում կնքված վարձակալության պայմանագրի պայմաններով:

#### **4.5. Ու՞մ են պատկանում վարձակալած գույքի բարելավումները**

Վարձակալի կատարած վարձակալած գույքից բաժանելի բարելավումները (քաժանելի բարելավում ասելով՝ նկատի ունենք այնպիսի բարելավումը, որը հնարավոր է առանձնացնել հիմնական գույքից՝ առանց վերջինիս վնաս

պատճառնելու) համարվում են նրա սեփականությունը, եթե այլ բան նախատեսված չէ վարձակալության պայմանագրով:

Եթե վարձակալն իր միջոցների հաշվին և վարձատուի համաձայնությամբ կատարել է վարձակալած գույքից անբաժանելի բարելավումներ՝ առանց դրան վնաս պատճառնելու, պայմանագրից դադարենքուց հետո վարձակալն իրավունք ունի հատուցում ստանալ այդ բարելավումների արժեքի չափով, եթե այլ բան նախատեսված չէ վարձակալության պայմանագրով:

Առանց վարձատուի համաձայնության կատարված՝ վարձակալած գույքից անբաժանելի բարելավումների արժեքը, որպես կանոն, վարձակալին չի հատուցվում:

#### **4.6. Իրավունք ո՞նի, արդյոք, վարձատուն վաղաժամկետ լուծել վարձակալության պայմանագրից**

Այս, ունի: Վարձատուի պահանջով վարձակալության պայմանագրից կարող է դատարանով վաղաժամկետ լուծվել, եթե վարձակալը՝

1. գույքն օգտագործել է պայմանագրի պայմանների կամ գույքի նշանակության էական կամ քաղմակի խախտումներով,

2. էականորեն վատթարացրել է գույքի վիճակը.

3. պայմանագրով սահմանված վճարման ժամկետը լրանալուց հետո երկու անգամից ավելի չի մուծել վարձավճարը.

4. վարձակալության պայմանագրով սահմանված ժամկետներում, իսկ պայմանագրում դրանց քացակայության դեպքում՝ ողջամիտ ժամկետում, չի կատարել գույքի հիմնական վերանորոգում՝ այն դեպքում, եթե, օրենքին, այլ իրավական ակտերին կամ պայմանագրին համապատասխան հիմնական վերանորոգում կատարելը վարձակալի պարտականությունն է:

Բնակելի տարածության վարձակալության պայմանագրից վարձատուի պահանջով կարող է լուծվել դատական կարգով, եթե՝

1. վարձակալը պայմանագրով սահմանված վճարման ժամկետի ավարտից հետո ավելի քան երկու անգամ չի վճարել բնակելի տարածության վարձավճարը.

2. վարձակալը կամ այն քաղաքացիները, որոնց գործողությունների համար նա պատասխանատվություն է կրում, քնակելի տարածությունը է կրում, քանդել կամ փչացրել են բնակելի տարածությունը:

Եթե բնակելի տարածության վարձակալը կամ այն քաղաքացիները, որոնց գործողությունների համար նա պատասխանատվություն է կրում, քնակելի տարածությունն օգտագործում են դրա նշանակությանը ոչ համապատասխան կամ պարբերաբար խախտում են հարևանների իրավունքները և շահենքը, վարձատուն իրավունք ունի վարձակալին նախազգուշացնել խախտումները վերացնելու անհրաժեշտության մասին, ինչպես նաև դատական կարգով լուծել բնակելի տարածության վարձակալության պայմանագրիրը:

Բնակելի տարածության վարձակալության պայմանագրից կողմերից յուրաքանչյուրի պահանջով կարող է լուծվել դատական կարգով՝

3. Եթե քանկելի տարածությունը դադարում է քնակվելու համար պիտանի լինելուց, ինչպես նաև դրա վթարային վիճակի դեպքում.
4. օրենքով կամ պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

#### **4.7. Իրավունք ունի՝, արդյոք, վարձակալը վաղաժամկետ լուծել վարձակալության պայմանագիրը**

Ինչպես նշված է ՀՀ քաղ. օր. 623-րդ հոդվածում, վարձակալության պայմանագիրը, վարձակալի պահանջով, դատարանով կարող է վաղաժամկետ լուծվել, եթե՝

5. վարձատուն վարձակալի օգտագործմանը չի տրամադրել գույքը կամ խոչընդոտներ է ստեղծել գույքը պայմանագրի պայմաններին կամ դրա նշանակությանը համապատասխան օգտագործելու համար.
6. վարձակալին հանձնված գույքը ունի դրա օգտագործմանը խոչընդոտող թերություններ, որոնց մասին վարձատուն չի նշել պայմանագիրը կնքելիս, որոնք նախապես հայտնի չեն եղել վարձակալին, և վերջինս չպետք է հայտնաբերել պայմանագիրը կնքելիս, գույքը զննելիս կամ դրա սարքինությունն ստուգելիս.

3. վարձատուն վարձակալության պայմանագրով սահմանված ժամկետներում, իսկ պայմանագրում դրանց քացակալության դեպքում ողջամիտ ժամկետում, չի կատարել գույքի հիմնական վերանորոգման իր պարտականությունը.

4. հանգամանքների բնրումով, որոնց համար վարձակալը պատասխանատու չէ, գույքը դարձել է օգտագործման համար ոչ պիտանի:

Վարձակալության պայմանագիրը կնքելիս՝ վարձատուն պարտավոր է վարձակալին նախազգուշացնել վարձակալության հանձնվող գույքի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների (գրավի իրավունք, սերվիտուտ և այլն) մասին: Վարձատուի կողմից այդ պարտականությունը չկատարելը վարձակալին իրավունք է տալիս լուծելու պայմանագիրը և հատուցելու վնասները:

Բնակելի տարածության վարձակալը և նրա հետ մշտապես քնակվող մյուս քաղաքացիներն ընդհանուր համաձայնությամբ իրավունք ունեն ցանկացած ժամկետում լուծել վարձակալության պայմանագիրը՝ այդ մասին երեք ամիս առաջ գրավոր նախազգուշացնելով վարձատուին: Վարձակալության պայմանագիրը վարձատուի պահանջով կարող է լուծվել նաև պայմանագրի էական խախտման կամ օրենքով կամ պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

#### **4.8. Իրավունք ունի՝, արդյոք, վարձակալն իր հերթին վարձակալության տալու վարձակալած գույքը**

Այս, նման իրավունք վարձակալն ունի:

Եթե վարձակալն ինքը վարձակալության տա իր վարձակալած գույքը, ապա դա կկոչվի ոչ թե վարձակալություն, այլ ենթավարձակալություն:

Համաձայն ՀՀ քաղ. օր. 620-րդ հոդվածի, վարձակալն իրավունք ունի վարձակալած գույքը հանձնել ենթավարձակալության, վարձակալության պայմանագրով իր իրավունքներն ու պարտականությունները փոխանցել այլ անձի, վարձակալած գույքը հանձնել անհատույց օգտագործման, վարձակալության իրավունքը գրավ դնել կամ որպես ավանդ ներդնել տնտեսական ընկերակցությունների և ընկերությունների կանոնադրական կապիտալում միայն վարձատուի համաձայնությամբ:

Ենթավարձակալության պայմանագիրը չի կարող կնքվել վարձակալության պայմանագրի ժամկետը գերազանցող ժամկետով:

Վարձակալության պայմանագիրը վաղաժամկետ դադարելու հետ մեկտեղ դադարում է նաև դրան համապատասխան կնքված ենթավարձակալության պայմանագիրը, եթե այլ քան նախատեսված չէ վարձակալության պայմանագրով:

## §5. Ժառանգության իրավունք

### 7. Ի՞նչ տարրենքություն կա ըստ կտակի ժառանգության և ըստ օրենքի ժառանգության միջև

Ժառանգությունը մահացած քաղաքացու իրավունքների և պարտականությունների՝ օրենքով սահմանված կարգով այլ անձանց փոխանցումն է: Ժառանգումը կատարվում է ըստ կտակի կամ ըստ օրենքի:

Կտակը սեփականատիրոջ կամքի արտահայտությունն է: Կտակը կազմում է անհատն՝ իր կենդանության օրոք, այն մասին, թե իր գույքը ինչպես և ում կողմից պետք է տնօրինվի իր մահից հետո:

Եթե կտակ չկա ժառանգությունը կատարվում է ըստ օրենքի: Եթե կա կտակ, սակայն դրանում որոշված չէ ամբողջ ժառանգության ճակատագիրը (օր., տան ժառանգության հարցը լուծվել է, իսկ բանկում ունեցած ավանդինը՝ ոչ), ապա գույքի մնացած մասով ժառանգությունը կկատարվի օրենքով սահմանված կարգով և անձանց շրջանակներում:

#### 5.2. Ե՞րբ է բացվում ժառանգությունը

Ժառանգությունը բացվում է քաղաքացու մահվան կամ մահվան մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրը, եթե վճռում այլ օր սահմանված չէ: Եթե նույն օրը մահացել են այն անձինք, ովքեր իրավունք ունեին ժառանգել մեկը մյուսից հետո, նրանք մահացած են ճանաչվում միաժամանակ: Ժառանգությունը բացվում է նրանցից յուրաքանչյուրի

մահվանից հետո և ժառանգման են իրավիրքում յուրաքանչյուրի ժառանգները:

Քաղաքացու մահվան պահը որոշվում է մահվան մասին վկայող բժշկակենսարանական տվյալների հիման վրա:

Ինչպես ասվելով, քաղաքացին կարող է մահացած հայտարարվել դատական կարգով: Համաձայն քաղ. օր. 47-րդ հոդվածի 1-ին կետի՝ «Քաղաքացին դատարանով կարող է մահացած ճանաչվել, եթե նրա բնակության վայրում երեք տարվա ընթացքում տեղիկություններ չկան նրա գոտնվելու վայրի մասին, իսկ եթե նա անհայտ կորել է այնպիսի հանգամանքներում, որոնք մահվան վտանգ են սպառնացնել կամ հիմք են տալիս ենթադրելու նրա մահը որոշակի դժբախտ դեպքի հետևանքով վեց ամսվա ընթացքում»:

### **5.3. Քաղաքացու ո՞ր իրավունքները չեն փոխանցվում ժառանգությամբ**

Համաձայն քաղ. օր. 1186-րդ հոդվածի 2-րդ կետի, ժառանգության զանգվածի (այսինքն՝ ժառանգման ենթակա գույքի, իրավունքների և պարտականությունների) մեջ չեն մտնում ժառանգատուի անձի հետ անխղելիորեն կապված իրավունքները և պարտականությունները, մասնավորապես՝

«1. այլիմենտային պարտավորություններով իրավունքներն ու պարտականությունները.

2. քաղաքացու կյանքին կամ առողջությանը պատճառված վնասը հատուցելու իրավունքը.

3.անձնական ոչ գույքային իրավունքները և այլ ոչ նյութական բարիքները.

4.այն իրավունքներն ու պարտականությունները, որոնց անցումը ժառանգությամբ չի թույլատրվում սույն օրենսգրքով և այլ օրենքներով»:

Առաջին կետում նշված այլիմենտային պարտավորությունները կրում են խիստ անձնական բնույթ: Իսկ անձնական բնույթը ունեցող և իրավունքները, և՝ պարտականություններն անօտարելի և անփոխանցելի են: Օրինակ, եթե մահացել է մի քաղաքացի, որը ծանրաբեռնված էր այլիմենտ վճարելու պարտականությամբ, ապա նրա մահվան փաստով դադարում է նաև այլիմենտ վճարելու պարտականությունը, և ոչ ոք չի կարող նրա ժառանգներից պահանջնել շարունակել այլիմենտի վճարումը:

Եթե՛ քաղաքացու առողջությանը վնաս է պատճառվել, ապա նա իրավունք ունի վնասի հատուցում պահանջնել: Սակայն տուժած ժառանգատուի մահվամբ դադարում է նրա կյանքին պատճառված վնասը հատուցելու պարտականության վրա հիմնված նրա գույքային իրավունքը և անձնական վնասի հատուցում պահանջնելու իրավունքը ժառանգման կարգով չի փոխանցվում:

Սակայն, եթե ժառանգատուն է ուրիշի առողջությանը վնաս պատճառվել, ապա նման վնասի գույքային հետևանքները հատուցելու պարտականությունը, ինչպես մյուս գույքային պարտականությունները, ժառանգներին է փոխանցվում ընդհանուր հիմունքներով:

Ժառանգատուին հասանելիք, բայց նրա կողմից չստացած կենսաթոշակի և նպաստի մնացած գումարներն ստանում են օրենքով նշված անձինք, սակայն ոչ թե ժառանգման իրավունքի կանոններով, այլ սոցիալական ապահովության և կենսաթոշակային օրենսդրության հիման վրա:

Ժառանգման կարգով այլ անձանց փոխանցվել չեն կարող նաև այնպիսի իրավունքներ, ինչպիսիք են անվան իրավունքը, գիտության, գրականության, արվեստի երկի հեղինակ լինելու իրավունքը, զյուտի, օգտակար մողելի, արտադրական նմուշի հեղինակ լինելու իրավունքը և այլն: Ծնշտենք, որ այստեղ խորն անվան, այսինքն՝ ոչ գույքային իրավունքի մասին է, իսկ հեղինակային, այսինքն՝ գույքային իրավունքները փոխանցվում են ժառանգաբար: Քաղ. օր. 1122-րդ հոդվածի 4-րդ կետում ասված է, որ հեղինակի մահից հետո ստեղծագործության անձնում մշտեղիության իրավունքն իրականացնում է կտակում նշված անձը, իսկ այդպիսի նշումի բացակայության դեպքում այն իրականացնում են հեղինակի ժառանգները, ինչպես նաև այն անձինք, որոնց վրա՝ օրենքին համապատասխան դրված է հեղինակային իրավունքների պաշտպանությունը: Հեղինակի մահից հետո 50 տարվա ընթացքում հեղինակային իրավունքը պատկանում է հեղինակի ժառանգներին և անցնում է ժառանգաբար ( Քաղ. օր. հոդվ. 1131):

Ժառանգության մեջ չեն մտնում նաև այն իրավունքներն ու պարտականությունները, որոնց ժառանգությամբ անցումը չի թույլատրվում քաղաքացիական օրենսգրքով և այլ օրենքներով:

Ժառանգությամբ չի փոխանցվում քաղաքացիների տարաբնույթ կոռպերատիվների անդամների անդամության իրավունքը, այսինքն անձնական իրավունքը: Խոսքը հատկապես վնրաբերում է բնակարանային-շինարարական, ամառանցային-շինարարական և այլ կոռպերատիվների անդամության իրավունքին:

Բայց կոռպերատիվում ձեռք բերած գույքային իրավունքներն ու ստանձնած պարտավորությունները փոխանցվում են կոռպերատիվի անդամի ժառանգներին:

Ժառանգման իրավունքով այլ անձանց չեն փոխանցվում նաև հեղինակային պայմանագրով ստանձնած նոր երկ ստեղծելու, սցենար գրելու, գիտական երկ ստեղծելու պարտավորությունը: Նման պարտավորությունները դադարում են հեղինակի մահվամբ:

#### 5.4. Ω՞վենք են համարվում առաջին և երկրորդ հերթի ժառանգներ

Նախ և առաջ հարկ է նշել, որ ժառանգների հերթականությունն օրենքը սահմանել է այն դեպքերի համար, երբ կտակ չկա, կամ եթե կա, ապա որոշված չէ որք ժառանգության ճակատագիրը, քանի որ, կտակի առկայության դեպքում օրենքով ժառանգների հերթականությանը դիմելն ավելորդ կլիներ, որովհետև ժառանգատուն ինքն է որոշում, թե ում և որքան ժառանգություն տրամադրի: Մի խորով, կտակարարը կաշկանդված չէ ժառանգների՝ օրենքով սահմանված հերթականությամբ:

Համաձայն ՀՀ քաղ. օր. 1216-րդ հոդվածի, առաջին հերթի ժառանգներ են համարվում ժառանգատուի Երեխանները, ամուսինը և ծնողները: Ժառանգատուի թոռները ժառանգում են ներկայացման իրավունքով:

Երեխանները ժառանգում են ծնողների մահից հետո, անկախ նրանից՝ ծնվել են օրինական ամուսնությունից, թե արտամուսնական կապնի հետևանքով, նույնիսկ եթե նրանց ծնողների ամուսնությունն անվավեր է ճանաչվել:

Արտամուսնական կապնի հետևանքով ծնված Երեխանները միշտ էլ ժառանգում են իրենց մոր մահից հետո: Հոր մահից հետո նրանք ժառանգում են այն պայմանով, որ հայրությունն ունենա իրավաբանական նշանակություն, այսինքն, եթե հայրությունը հաստատված է օրենքով սահմանված կարգով: Ըստ օրենքի՝ ժառանգության դեպքում որդեգրվածները և նրանց սերունդները որդեգրողի և նրա ազգականների նկատմամբ իրավունքների և պարտականությունների ողջ համալիրով հավասարվում են ծագումով ազգականներին (արյունակից ազգականներին):

Երեխանները հավասարապես ժառանգում են ծնողների մահից հետո, անկախ նրանց սերից, ընտանեկան և նյութական դրությունից, անկախ նրանից՝ ծնողների հետ են ապրում, թե՛ առանձին:

Խորթ Երեխանները խորթ մոր կամ խորթ հոր մահից հետո ժառանգ չեն համարվում: Իրենց հերթին՝ խորթ հայրն ու խորթ մայրը ժառանգ չեն համարվում խորթ զավակի մահից հետո: Նրանք կարող են ըստ օրենքի ժառանգ համարվել, եթե որպես անաշխատունակ գտնվել են մահացածի խնամքի տակ՝ նրա մահից առաջ ոչ պակաս քան մեկ տարի: Խորթ դուստրը և խորթ որդին ժառանգում են խորթ հորից և խորթ մորից հետո, եթե վնրջիններս նրանց որդեգրել են: Թերևս այստեղ կարիք կա պարզաբանել, թե ովքեր են խորթ ծնողները և ովքեր՝ խորթ զավակները:

Խորթ զավակը քաղաքացու ամուսնու՝ նախկին ամուսնությունից ունեցած այն զավակն է, որն ապրել է նրա հետ համատեղ՝ նոյն հարկի տակ, և որի խնամքով ու դաստիարակությամբ նա զբաղվել է: Այսինքն՝ խորթ ծնողը խորթ զավակի հետ արյունակցական կապի մեջ չի գտնվում: Խորթ որդին, խորթ դուստրը և խորթ հայրը, խորթ մայրը գտնվում են ոչ թե արյունակցական, այլ բարեկամական կապի մեջ:

Քաղաքացու մահից հետո առաջին հերթի ժառանգ է համարվում նաև նրա ողջ մնացած ամուսինը: Ըստ որում, ամուսնու իրավունքով ժառանգել կարող է նա, ով ժառանգության բացման պահին ժառանգատուի հետ գտնվել է օրինական ամուսնության մեջ: Նկատի ունենք այն անձանց, որոնց ամուսնությունը գրանցված է քաղաքացիական կազության ակտերի գրանցման պետական մարմիններում, ինչպես նաև հայրենադարձներից՝ մինչև Հայաստան վերադառնալը, արտասահմանյան Երկրում կրոնական ծիսակատարություններով կամ նրանց ապրած երկրի օրենքներով ամուսնացած անձանց: Ամուսինների՝ առանց ամուսնալուծվելու առանձին ապրելը ողջ մնացած ամուսնուն չի գրկում ժառանգման իրավունքից:

Հանգույցալի հետ փաստական ամուսնական կապնի մեջ գտնվող անձը, անկախ նրա և հանգույցալի միջև փաստական ամուսնական կապնի տևողությունից, իրավունք չունի նրա գույքը ժառանգելու ամուսնու իրավունքով: Սակայն նրա մահից հետո «կենդանի մնացած ամուսինը»

Ժառանգելու իրավունք ունի այն դեպքում, եթե փաստական ամուսնական կապերն առաջացել են նախքան ԽՍՀՄ Գերազույն խորհրդի նախագահության 1944թ. հուլիսի 8-ի իրամանագրի ընդունումը, և այդ փաստը հաստատվել է դատական կարգով օրենքի պահանջների պահպանմամբ:

Ժառանգման իրավունք չի առաջանում նաև դատարանի կողմից անվավեր ճանաչված ամուսնության դեպքում: Նախկին ամուսնը ժառանգման իրավունքը կորցնում է, եթե ամուսնալուծությունն արդեն ձևակերպվել է քաղաքացիական կացության ակտերի գրանցման (ԶԱԳՄ) պետական մարմիններում:

Եթերորդ հերթի ժառանգներ են համարվում ժառանգատուի հարազատ նդրայրներն ու քույրերը: Ընդ որում, երկրորդ հերթի ժառանգները ժառանգման են իրավիրքում չորս դեպքերում:

8. Եթեն քացակայում են առաջին հերթի բոլոր ժառանգները,
9. Եթեն առաջին հերթի ժառանգները չեն ընդունում ժառանգությունը,
10. Եթեն առաջին հերթի բոլոր ժառանգները կտակարարի կողմից զրկվել են ժառանգությունից,
11. Եթեն առաջին հերթի բոլոր ժառանգներն օրենքի ուժով զրկվել են ժառանգելու իրավունքից ( Քաղ. օր. հոդվ. 1191):

Ի դեպք, նոյն կանոններով է լուծվում հարցը հաջորդ՝ ասենք, երրորդ (երրորդ հերթի ժառանգներն են ինչպես հայրական, այնպես էլ մայրական կողմից պապը և տատը), չորրորդ (չորրորդ հերթի ժառանգներն են՝ ժառանգատուի ծնողների նդրայրները և քույրերը՝ հորեղբայրները, հորաքույրները, մորեղբայրները, մորաքույրները, իսկ նրանց նրենսաները ժառանգում են ներկայացման իրավունքով) հերթերի ժառանգներին ժառանգման իրավիրներին:

Ըստ օրենքի որպես ժառանգներ՝ նդրայրների ու քույրերի հարազատ կամ համամայր կամ համահայր լինելն իրավական նշանակություն չունի, նրանք բոլորն ել ժառանգում են հավասար հիմունքներով:

## 5.5. Ինչպես և ու՞մ կողմից է կազմվում կտակը

Որպեսզի կտակը վավերական լինի, պետք է համապատասխանի օրենքով սահմանված ձևին:

Կտակը պետք է կազմվի գրավոր, նշելով այն կազմելու վայրը և ժամանակը, անձամբ ստորագրվի կտակարարի և վավերացվի նոտարի կողմից: Եթեն կտակարարը ֆիզիկական թերությունների, հիվանդության կամ անգրագիտության պատճառով չի կարող անձամբ ստորագրել կտակը, ապա, նրա լինդրանքով, նոտարի կամ օրենքին համապատասխան կտակը վավերացնող այլ անձի ներկայությամբ կտակը կարող է ստորագրվել այլ

անձի կողմից՝ կտակում նշելով այն պատճառները, որոնց ուժով կտակարարն անձամբ չի կարողացնի ստորագրել կտակը: Կտակում պնտք է նշվեն այդ անձի անունը և նրա բնակության վայրը:

Կտակը վավերացնում է նոտարը: Եթե կտակարարն անձամբ չի կարող գրել կտակը, այն կարող է կտակարարի բառերով գրի առնել նոտարը: Կտակը գրելիս կամ այն գրի առնելիս թույլատրվում է օգտագործել տեխնիկական միջոցներ՝ համակարգիչ, գրամեքենա և այլն: Սակայն կտակարարի բառերով նոտարի գրի առած կտակը, մինչև դրա ստորագրելը, պետք է կտակարարն ամբողջությամբ կարդա նոտարի ներկայությամբ:

Եթե կտակարարը ֆիզիկական թերությունների, հիվանդության կամ անգրագիտության պատճառով ի վիճակի չէ անձամբ կարդալու, ապա նոտարը դրա տեքստը պետք է հրապարակի վկայի ներկայությամբ և այդ մասին նշում կտակարի կտակում:

## 5.6. Ովքնը կարող են կտակ կազմելիս հանդես գալ որպես վկա

Ոչ բոլոր անձինք կարող են որպես վկա հանդես գալ: Համաձայն ՀՀ քաղ. օր. 1208-րդ հոդվածի՝ կտակը կազմելիս, այն ստորագրելիս կամ վավերացնելիս վկա չեն կարող լինել, ինչպես նաև կտակարարի փոխարեն կտակը չեն կարող ստորագրել՝

1. Նոտարը կամ կտակը վավերացնող այլ անձը.
2. այն անձը, ում օգտին կազմվել է կտակը կամ արվել կտակային հանձնարարություն, այդ անձի ամուսինը, երեխանները, ծնողները.
3. լրիվ գործունակությամբ չօժտված քաղաքացիները.
4. անգրագետները և կտակը կարդալ չկարողացող անձինք.
5. այն անձինք, ովքնը բավարար կերպով չեն տիրապետում կազմված կտակի լեզվին.
6. կենդ ցուցմունք տալու համար դատապարտված անձինք:

Պետք է հիշեն նաև, որ կտակարարը ցանկացած ժամանակ կարող է վերացնել, փոփոխել և լրացնել իր կտակը:

Կտակը կազմվում է երկու հավասարագոր օրինակներով, որոնցից մեկը պահպում է նոտարական գրասենյակում, իսկ մյուսը՝ ստորագրությամբ, հանձնվում է կտակարարին:

## 5.7. Քաջի նոտարից, Էլ ովքնը իրավունք ունեն վավերացնելու կտակը

ՀՀ քաղաքացիական օրենսդրության համաձայն (Քաղ. օր. հոդվ. 1207) նոտարական կարգով վավերացված կտակներին հավասարեցվում են՝

1. հիվանդանոցներում, հոսպիտալներում, այլ հիվանդանոցային բուժական հաստատություններում բուժվող կամ ծննդերի և հաշմանդամների տներում ապրող քաղաքացիների կտակները՝ վավերացված այդ հիվանդանոցների, հոսպիտալների և բուժական հաստատությունների գլխավոր բժիշկների, բուժական մասու նրանց տնտեսակալների կամ հերթապահ բժիշկների, ինչպես

նաև հոսպիտալների պետերի, ծերերի և հաշմանդամների տների տնօրենների կամ զլսավոր քժիշկների կողմից.

2. զինծառայողների, նրանց ընտանիքների անդամների, իսկ զինվորական մասերի տնեղաբաշխման կետերում, որտեղ չկան նոտարներ, նաև այդ զինվորական մասերում աշխատող քաղաքացիական անձանց, նրանց ընտանիքների անդամների կտակները՝ վավերացված զինվորական մասերի հրամանատարների կողմից.

3. հեռավոր այն բնակավայրերում, որտեղ չկա նոտար, ապրող անձանց կտակները՝ վավերացված համայնքի ղեկավարի կողմից.

4. երկրաբանական կամ նմանատիպ այլ արշավախմբերում գտնվող քաղաքացիների կտակները՝ վավերացված այդ արշավախմբերի ղեկավարների կողմից.

5. Հայաստանի Հանրապետության դրոշի ներքո նավարկող նավերի վրա գտնվող քաղաքացիների կտակները՝ վավերացված այդ նավերի նավապետների կողմից.

6. ազատազրկման վայրերում գտնվող անձանց կտակները՝ վավերացված ազատազրկման վայրերի պետերի կողմից:

Այն դեպքերում, եթե նոտարական գործողություններ կատարելն օրենքով վերապահված է Հայաստանի Հանրապետության հյուպատոսական հաստատությունների պաշտոնատար անձանց, նոտարի փոխարեն կտակը վավերացնում է համապատասխան անձը՝ կտակի ձևի և դրա նոտարական վավերացման կարգի մասին ՀՀ քաղաքացիական օրենսգրքի կանոնների պահպանմամբ (Քաղ. օր. հոդվ. 1205, 7-րդ կետ):

## 5.8. Ե՞րբ է կտակն անվավեր համարվում

Կտակը կարող է դատարանով անվավեր ճանաչվել այն աճի հայցով, ում իրավունքները կամ շահերը խախտվել են այդ կտակով: Կտակն անվավեր է ճանաչվում կտակի ձևի մասին կանոնները և գործարքների անվավերության մասին ՀՀ քաղ. օր. այլ դրույթները խախտելու հետևանքով:

Կտակը գործարք է, ուստի այն պետք է կատարվի գործարքների վավերության կանոնների համաձայն: Խոսքը վերաբերում է գործարքի ձևին, բովանդակությանը, գործարքի մասնակիցների գործունակությանը և այլն:

Այսպես, եթե չի պահպանվել կտակի ձևը, այսինքն՝ այն կազմվել է բանավոր կամ, չնայած նրան, որ կազմվել է գրավոր ձևով, բայց տնային պայմաններում առանց նոտարական հաստատման, այն անվավեր կհամարվի:

Կտակն անվավեր կդիտվի նաև, եթե այն կազմված է՝ անգործունակ կամ սահմանափակ գործունակ, իր գործողությունների նշանակությունը հասկանալու կամ դրանք ղեկավարելու անընդունակ քաղաքացու կողմից, ինչպես նաև էական մոլորության, խաբենության, բռնության, կամ սպառնալիքի ազդեցության ներքո:

Կտակում առկա վրիպակները և այն կազմելու, ստորագրելու կամ վավերացնելու կարգի այլ աննշան խախտումները, եթե ապացուցված է, որ

դրանք չեն կարող ազդել կտակարարի կամքի արտահայտության վրա, իմբը չեն կտակն անվավեր ճանաչելու համար:

Կտակն անվավեր ճանաչելը դրանում նշված անձանց չի գրկում որպես ժառանգներ կամ շահառուներ ըստ օրենքի կամ այլ վավեր կտակի հիման վրա ժառանգության իրավունքից:

### 5.9. Ի՞նչ է նշանակում ներկայացման իրավունքով ժառանգ, կարո՞ղ, են արդյոք, մահացած ժառանգի երեխաները ժառանգել նրա փոխարեն

«Ռ գործող քաղաքացիական օրենսգրքի համաձայն՝ ներկայացման իրավունքով ժառանգել կարող են միայն ըստ օրենքի որոշ ժառանգների երեխաները և այն էլ՝ օրենքով նախատեսված մի շարք պայմանների առկայության դեպքում: Խոսքը վերաբերում է ժառանգատուի թոռներին, նրա քույրերի ու եղբայրների երեխաներին, ինչպես նաև ժառանգատուի հորարույրների, հորեղբայրների, մորարույրների, մորեղբայրների երեխաներին: Այդ անձինք ժառանգում են ներկայացման իրավունքով, այսինքն՝ եթե ժառանգության բացման պահին նրանց ծնողները ողջ չեն, նրանց փոխարեն հանդես են զայիս երեխաները:

Ներկայացման իրավունքով ժառանգողների իրավունքը պայմանավորված է նրանց ծնողների առկայությամբ: Եթե ժառանգատուն մահանում է և ժառանգության բացման պահին առկա են լինում նրա զավակները, ապա վերջիններիս զավակների, այսինքն՝ ներկայացման իրավունքով ժառանգելու իրավունք ունեցող թոռների, ժառանգման իրավունքի մասին խոսք լինել չի կարող: Իսկ եթե ժառանգության բացման պահին արդեն մահացած է լինում ժառանգատուի՝ երեխաներ ունեցող զավակը, այդ երեխաները, ներկայացնելով իրենց մահացած ծնողին, նրա հասանելիք բաժինն ստանալու իրավունք են ձեռք բերում:

Հետաքրքիր մի հանգամանք ևս: Ներկայացման իրավունքով չեն կարող ժառանգել ժառանգությունից մեկուսացված կամ ժառանգատուի կողմից ժառանգությունից գրկված՝ ըստ օրենքի ժառանգի երեխաները: Դա բացատրվում է նրանով, որ երեխաները ժառանգում են իրենց այն ծնողի հասանելիք բաժինը, որը նա կժառանգեր, եթե ողջ լիներ: Իսկ այս դեպքում խոսքը վերաբերում է այն ծնողներին, որոնք, եթե ողջ լինեին, իրենք չեն կարող ժառանգել մահացածի գույքը՝ Ռ քաղ. օր. 1191-րդ հոդվ. կանոնների համաձայն:

Ներկայացման իրավունքով ժառանգում տեղի է ունենում միայն ըստ օրենքի ժառանգման դեպքում և չի կիրառվում ըստ կտակի ժառանգման դեպքում:

### 5.10. Ովքեր պարտադիր ժառանգության իրավունք ունեն

«Ռ քաղաքացիական օրենսգիրքն ըստ օրենքի ժառանգների թվից առանձնացնում է անչափահաս և անաշխատունակ անձանց, ովքեր

«անկախ կտակի բովանդակությունից», պետք է բաժին ստանան ժառանգական գույքից:

Համաձայն ՀՀ քաղ. օր. 1194-րդ հոդվածի՝ պարտադիր բաժնի իրավունք ունեն ժառանգատուի անչափահաս երեխաները, ինչպես նաև ժառանգատուի՝ օրենքով սահմանված կարգով հաշմանդամ կամ անգործունակ ճանաչված կամ վաթսուն տարին լրացած ժառանգատուի երեխաները, ամուսինը և ծնողները:

Այսպիսով, համաձայն վերոհիշյալ հոդվածի պարտադիր ժառանգների թվին են դասվում՝

1. անչափահաս երեխաները,
2. չափահաս հաշմանդամ երեխաները,
3. անգործունակ ճանաչված երեխաները,
4. 60 տարեկան դարձած երեխաները,
5. 60 տարեկան դարձած ամուսինը,
6. 60 տարեկան դարձած ծնողները:

Օրենսգրքով որոշված է նաև պարտադիր բաժնի իրավունք ունեցող ժառանգների բաժնի չափը: Քաղ. օր. 1194-րդ հոդվածի համաձայն՝ պարտադիր բաժնի չափը հավասար պետք է լինի այն բաժնի առնվազն կեսին, որը ժառանգին կհասներ ըստ օրենքի ժառանգման դեպքում:

## 5.11. Ըստ օրենքի ժառանգության դեպքում որդեգրվածներն ու որդեգրողներն ինչպիսի իրավունքներ ունեն

Ըստ օրենքի ժառանգության դեպքում որդեգրվածները և նրանց սերունդները որդեգրողի և նրա ազգականների նկատմամբ իրավունքների և պարտականությունների ողջ համալիրով հավասարվում են ծագումով ազգականներին (Ամ. և ընտ. յր. հոդվ. 124): Ուստի որդեգրողի մահից հետո որդեգրվածները նրա հարազատ զավակների հետ հավասարապես համարվում են առաջին հերթի ժառանգներ: Միաժամանակ, որդեգրվածներն իրենց հարազատ ծնողների և իրենց ազգականների նկատմամբ կորցնում են անձնական ու գույքային իրավունքները, այդ թվում նրանց մահից հետո նրանց գույքը ժառանգելու իրավունքները, և ազատվում են պարտականություններից (Ամ. և ընտ. յր. հոդվ. 124, 2-րդ կետ):

## 5.12. Ըստ օրենքի ժառանգությունն ընդունելը, ժամկետները

Ժառանգությունն ընդունվում է ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին ժառանգի դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելով կամ, եթե այլ բան ապացուցված չէ, ապա ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է

համարվում նաև, երբ նա սկսում է փաստացի տիրապետող կամ կառավարել ժառանգված գույքը, ներառյալ, երբ ժառանգը՝ միշոցներ է ձեռնարկել գույքը պահպանելու և այն երրորդ անձանց ուժնագույթուններից կամ հավակնություններից պահպանելու համար, իր հաշվին կատարել է գույքի պահպանման ծախսերը, իր հաշվից վճարել է ժառանգատուի պարտքները կամ երրորդ անձանցից ստացել է ժառանգատուին հասանելիք գումարները:

Ժառանգույթունն ընդունելու համար քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված է որոշակի ժամկետ: Ըստ ՀՀ քաղ. օր. 1227-ըդ հոդվածի՝ ժառանգույթունը կարող է ընդունվել ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում: Եթե վեց ամսվա ընթացքում ժառանգը չի ընդունվել ժառանգույթունը, ապա նա կորցնում է ժառանգույթունն ընդունելու իրավունքը:

Եթե ժառանգելու իրավունքն այլ անձանց համար ծագում է ժառանգույթունից ժառանգի հրաժարվելու դեպքում, ապա այդ անձինք կարող են ժառանգույթունն ընդունել գույություն ունեցող վեցամսյա ժամկետի մնացած ժամանակի ընթացքում, իսկ եթե այն երեք ամսից պակաս է, ապա երեք ամսվա ընթացքում:

Ժառանգության ընդունման ժամանակ է համարվում կամ ժառանգի կողմից ժառանգական գույքի փաստացի տիրապետմանն անցնելու օրը, կամ ժառանգույթունն ընդունելու մասին դիմումը նոտարական գրասենյակ հանձնելու օրը:

### 5.13. Ինչպես վարվել, եթե բաց է թողնված ըստ կտակի կամ ըստ օրենքի ժառանգության ընդունման ժամկետը

Եթե վեցամսյա ժամկետում ժառանգը չընդունի ժառանգույթունը, ապա նա կկորցնի ժառանգույթունն ընդունելու իրավունքը:

Նման դեպքերում ժառանգը կարող է առանց դատարան դիմելու ժառանգույթունն ընդունել միայն այն պարագայում, եթե առկա է ժառանգույթունն ընդունած մնացած բոլոր ժառանգների համաձայնությունը: Այլապես, նա պետք է դիմի դատարան:

Ժառանգույթունն ընդունելու ժամկետը բաց թողած ժառանգի դիմումի իմասն վրա դատարանը կարող է նրան ճանաչել ժառանգույթունն ընդունած՝ հարզելի համարելով ժամկետը բաց թողնելու պատճառները, եթե պարզվի, որ ժամկետը բաց թողնելու պատճառ է դարձել այն հանգամանքը, որ ժառանգը չգիտեր և պարտավոր չէր իմանալ ժառանգության բացման մասին, և այն պայմանով, որ ժառանգույթունն ընդունելու ժամկետը բաց թողած ժառանգն այդ ժամկետը բաց թողնելու պատճառների վերանալուց հետո վեց ամսվա ընթացքում դիմել է դատարան:

## **Հավելված 1** **Նոտարական գործողությունների համար գանձվող պետական տուրքի դրույքաչափերը**

Քաղվածք «Պետական տուրքի  
մասին» ՀՀ օրենքից

Հոդված 11. Նոտարական գործողությունների համար պետական տուրքի դրույքաչափերը

Նոտարական գրասենյակները նոտարական գործողությունների համար պետական տուրքը գանձում են հետևյալ դրույքաչափերով՝

1. անշարժ գույքի՝ հողի և դրան ամրակայված շենքերի, շինուազների յուրաքանչյուր միավորի օտարման (բացառությամբ՝ նվիրատվության), վարձակալության պայմանագրերը վավերացնելու համար՝

ա) գյուղատնտեսական նշանակության սեփականաշնորհված հողերի յուրաքանչյուր միավորի օտարման, գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության, պետական սեփականություն համարվող հողերի օտարման համար՝ բազային տուրքի չափով,  
բ) այլ գույքի համար՝ բազային տուրքի տասնապատիկի չափով:

2. ավտոմեքենաների, մոտոցիկլետների և այլ ինքնագնաց մեքենաների ու մեխանիզմների օտարման (բացառությամբ՝ նվիրատվության) պայմանագրերը վավերացնելու համար՝

- ամուսնուն, ծնողին, զավակին՝ բազային տուրքի եռապատիկի չափով  
- այլ անձանց՝ բազային տուրքի տասնապատիկի չափով:

3. գրավի (բացառությամբ անշարժ գույքի) մասին պայմանագրի վավերացման և գրանցման համար՝ բազային տուրքի հնգապատիկի չափով

4. անշարժ գույքի գրավի (հիփոթենքի) պայմանագրի վավերացման (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության սեփականաշնորհված հողերի յուրաքանչյուր միավորի և բնակելի նշանակության անշարժ գույքի) համար՝ բազային տուրքի տասնապատիկի չափով

4.1. գյուղատնտեսական նշանակության սեփականաշնորհված հողերի յուրաքանչյուր միավորի և բնակելի նշանակության անշարժ գույքի գրավի (հիփոթենքի) պայմանագրի վավերացման համար՝ բազային տուրքի չափով

4.2. գյուղատնտեսական նշանակության հողերի միավորման, բաժանման պայմանագրերի վավերացման համար՝ բազային տուրքի չափով

5. գնահատման ենթակա այլ պայմանագրերի վավերացման համար՝ բազային տուրքի տասնապատիկի չափով

6. նախակինում կնքված պայմանագրերով նախատեսված իրավունքները և պարտականությունները հանձնելու մասին գործարքների հաստատման, գույքի բոլոր տնտեսական վաճառքի, նվիրատվության, փոխանակության պայմանագրերի

(բացի սույն հոդվածի 1-4 կետներում նշվածներից) վավերացնելու համար՝ բազային տուրքի տասնապատիկի չափով:

7. գույքի բաժանման պայմանագրերի, երաշխավորության, գնահատման ոչ ննթակա պայմանագրերի վավերացնելու համար՝ բազային տուրքի հնգապատիկի չափով
8. կտակների հաստատելու համար՝ բազային տուրքի հնգապատիկի չափով
9. ժառանգության իրավունքի վկայագիր տալու և նվիրատվության պայմանագրեր վավերացման համար՝ բազային տուրքի նոռապատիկի չափով
  - ա) առաջին հերթի ժառանգներին՝ բազային տուրքի նոռապատիկի չափով
  - բ) երկրորդ հերթի ժառանգներին՝ բազային տուրքի հնգապատիկի չափով
  - գ) այլ անձանց՝ բազային տուրքի տասնապատիկի չափով
10. ամուսնության ժամանակ ձեռք բերված ընդհանուր գույքի (բացառությամբ անշարժ գույքի) նկատմամբ ամուսինների սեփականության իրավունքի վկայագիր տալու համար՝ բազային տուրքի նոռապատիկի չափով
11. գույքի տիրապետման, օգտագործման և տնօրինման, բաժնեմասների (փայտաթինների) և ավանդների կառավարման, վարկային գործառություններ կատարելու իրավունքի լիազորագրեր հաստատելու համար՝ բազային տուրքի տասնապատիկի չափով
12. ավտոտրանսպորտային միջոցները տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունքի լիազորագրերը հաստատելու համար
  - ամուսնուն, ծնողին, զավակին՝ բազային տուրքի չափով
  - այլ անձանց՝ բազային տուրքի տասնապատիկի չափով
13. այլ լիազորագրեր հաստատելու համար, այդ թվում՝ զանազան անձանց, հիմնարկներից և կազմակերպություններից գումարներ, ծանրոցներ, թղթակցություններ ստանալու համար՝ բազային տուրքի չափով
14. ժառանգության գույքի պահպանմանն ուղղված միջոցառումներ իրականացնելու համար՝ բազային տուրքի տասնապատիկի չափով
15. փաստաթղթերի թարգմանության յուրաքանչյուր էջի իսկությունը վավերացնելու համար՝ բազային տուրքի հիսուն տոկոսի չափով
16. կատարողական մակագրություններ անելու համար՝ բազային տուրքի տասնապատիկի չափով
17. փաստաթղթերի պատճենների և դրանցից քաղվածքների յուրաքանչյուր էջի իսկությունը վավերացնելու համար՝ բազային տուրքի 30 տոկոսի չափով
18. փաստաթղթերի ստորագրությունների, այդ թվում՝ թարգմանչի ստորագրության յուրաքանչյուր փաստաթղթի իսկությունը վավերացնելու համար՝ բազային տուրքի 50 տոկասի չափով
19. նոտարական գրասենյակի գործերում նորած փաստաթղթերի կրկնօրինակները տալու, ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումները նոտարի միջոցով ֆիզիկական և իրավաբանական անձանց հանձնելու համար՝ բազային տուրքի կրկնապատիկի չափով
20. պայմանագրեր, կտակներ, լիազորագրեր, դիմումներ և այլ նախագծեր կազմելու, ինչպես նաև տպագրված նախագծերի օրինակների ձևեր տրամադրելու և լրացնելու համար՝ բազային տուրքի չափով
21. փաստաթղթերի պատճեններ և դրանցից քաղվածքներ հանելու համար՝ բազային տուրքի չափով

22. նոտարական այլ գործողությունների համար՝ բազային տուրքի յոյժնապատիկի չափով

Նոտարակամ գրասենյակի շենքից դուրս կատարվող նոտարական գործողությունների համար պետական տուրքը գանձվում է կրկնակի չափով:

## Հավելված 2

### Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար գանձվող պետական տուրքի դրույքաչափերը

Քաղվածք «Պետական տուրքի  
մասին» ՀՀ օրենքից

Հոդված 16. Պետական գրանցման համար պետական տուրքի դրույքաչափերը

Պետական գրանցման համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով՝

36. անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում կատարելու համար՝

ա) անշարժ գույքի պետական գրանցում կատարելու (քացառությամբ սեփականաշնորհվող պետական, հանրային և համայնքային բնակարանային ֆոնդի բնակարանների)՝ բազային տուրքի չափով՝

բ) Հայաստանի Հանրապետության քաղաքացիների տնամերձ, այգեգործական (ամառանոցային) և բնակելի տան շինանարության և դրա սպասարկման համար հատկացված և որպես սեփականություն նրանց անցած հողերի և ամրակայված գույքի պետական գրանցում կատարելու (քացառությամբ սահմանամերձ, լեռնային, և ծայրամասային բնակավայրերի)՝ բազային տուրքի հնգապատիկի չափով՝

գ) Հայաստանի Հանրապետության քաղաքացիների Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ, լեռնային, և ծայրամասային բնակավայրերում տնամերձ, այգեգործական (ամառանոցային) և բնակելի տան շինանարության և դրա սպասարկման համար հատկացված և որպես սեփականություն նրանց անցած հողերի և ամրակայված գույքի պետական գրանցում կատարելու՝ բազային տուրքի 30 տոկոսի չափով՝

դ) հասարակական և արտադրական նշանակության անշարժ գույքի օտարման (վաճառք, փոխանակություն, նվիրատվություն) պայամանագրի պետական գրանցում կատարելու համար՝ բազային տուրքի քանապատիկի չափով՝

դա) «փոքր» օբյեկտների, քացառությամբ «դք» կետով նշված անշարժ գույքի (համաձայն «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի)՝ բազային տուրքի տասնապատիկի չափով՝

դբ) զյուղատնտեսական նշանակության անշարժ գույքի և մինչև 30 քառակուսի մետր կրպակների, տաղավարների, ավտոտնակների և այլ անշարժ գույքի՝ բազային տուրքի քառամասպատիկի չափով՝

դգ) հասարական և արտադրական նշանակության այլ անշարժ գույքի՝ բազային տուրքի չափով

ե) անհատական բնակելի տների, այգետնակների պետական գրանցում կատարելու՝ բազային տուրքի չափով

զ) անշարժ գույքի առանձին միավորների (ավտոտնակ, հացատուն, գոմ և այլ կառույցներ) պետական գրանցում կատարելու՝ բազային տուրքի բանապատիկի չափով

է) բնակելի նշանակության անշարժ գույքի՝ հողի (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության սեփականաշնորհված հողերի) և ամրակայված գույքի օտարման (ձեռքբերման) պայմանագրի պետական գրանցում կատարելու համար՝ բազային տուրքի չափով

ը) գյուղատնտեսական նշանակության սեփականաշնորհված հողամասների յուրաքանչյուր միավորի օտարման (ձեռքբերման) պայմանագրի պետական գրանցում կատարելու համար՝ բազային տուրքի 30 տոկոսի չափով

ը1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիների՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ, լեռնային, ծայրամասային բնակավայրերում գյուղատնտեսական նշանակության սեփականաշնորհված հողամասների յուրաքանչյուր միավորի (բացառությամբ տնամերձ հողամասների) օտարման (ձեռքբերման) պայմանագրի պետական գրանցում կատարելու համար՝ բազային տուրքի չափով

թ) կտակի կամ ժառանգման միջոցով ձեռք բերված անշարժ գույքի պետական գրանցում կատարելու համար՝ բազային տուրքի չափով

ժ) պետական և համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության և ենթավարձակալության պայմանագրի պետական գրանցում կատարելու համար՝ բազային տուրքի չափով

ժա) պետական և համայնքային սեփականություն համարվող հողերի օտարման, վարձակալության և ենթավարձակալության պայմանագրի պետական գրանցում կատարելու համար՝ բազային տուրքի չափով

ժթ) շենքերի և շինուազների վարձակալության և ենթավարձակալության պայմանագրի պետական գրանցում կատարելու համար՝ բազային տուրքի չափով

ժզ) ՀՀ քաղաքացիներին՝ սեփականություն համարվող անշարժ գույքի վարձակալության պայմանագրի պետական գրանցում կատարելու համար՝ բազային տուրքի չափով

ժզ1) ՀՀ քաղաքացիներին՝ գյուղատնտեսական նշանակության սեփականաշնորհված հողամասների յուրաքանչյուր միավորի վարձակալության պայմանագրի պետական գրանցում կատարելու համար՝ բազային տուրքի չափով

ժդ) անշարժ գույքի օգտագործման իրավունքի պայմանագրի պետական գրանցում կատարելու՝ բազային տուրքի հնգապատիկի չափով

ժե) անշարժ գույքի (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության սեփականաշնորհված հողերի) և բնակելի նշանակության անշարժ գույքի գրավի (հիփոթենքի) պայմանագրի գրանցում կատարելու և նշված գույքի հիփոթենքի առարկայի օտարման վրա սահմանափակում (արգելադրում) կիրառելու համար՝ բազային տուրքի չափով

ժե1) գյուղատնտեսական նշանակության սեփականաշնորհված հողամասների յուրաքանչյուր միավորի, ինչպես նաև բնակելի նշանակության անշարժ գույքի գրավի (հիփոթենքի) պայմանագրի պետական գրանցում կատարելու և նշված

հողամասի գրավի (հիփոթենքի) առարկայի օտարման վրա սահմանափակում (արգելադրում) կիրառելու համար՝ բազային տուրքի կրկնապատիկի չափով

ԺԵ2) շարժական գույքի (բացառությամբ զյուղատնտեսական ինքնագնաց մեթենաների) հիփոթենքի պայմանագրի պետական գրանցում (արգելադրում) կիրառելու և նշված գույքի հիփոթենքի առարկայի օտարման վրա սահմանափակում (արգելադրում) կիրառելու համար՝ բազային տուրքի չափով

ԺԵ3) զյուղատնտեսական ինքնագնաց մեթենաների հիփոթենքի պայմանագրի պետական գրանցում կատարելու և նշված գույքի հիփոթենքի առարկայի օտարման վրա սահմանափակում (արգելադրում) կիրառելու համար՝ բազային տուրքի չափով

ԺԳ) անշարժ գույքի փոխանակման պայմանագրենքի պետական գրանցում կատարելու՝ բազային տուրքի չափով

ԺԵ) հողը մշտական օգտագործման հանձնելու որոշումների պետական գրանցում կատարելու՝ բազային տուրքի չափով

ԺԹ) հողամասների սահմանները փոփոխելու, միավորելու և բաժանելու մասին պայմանագրենքի պետական գրանցում կատարելու՝ բազային տուրքի չափով

ԺԹ) անշարժ գույքի նկատմամբ իրավունքի սահմանափակման, այդ թվում սերվիտուտի պայմանագի պետական գրանցում կատարելու՝ բազային տուրքի չափով

ի) անշարժ գույքի արտոնված օգտագործման իրավունքի արտոնագրի պետական գրանցում կատարելու համար՝ բազային տուրքի հնգապատիկի չափով

իա) անշարժ գույքի նկատմամբ ժամկետային, հայեցողական, անժամկետ, զմահ իրավագորության պետական գրանցում կատարելու համար՝ բազային տուրքի չափով

իբ) անշարժ գույքի սեփականության իրավունքի առանձին իրավագորությունների պետական գրանցում կատարելու համար՝ բազային տուրքի չափով

իբ1) անշարժ գույքի նկատմամբ այլ իրավունքների պետական գրանցման համար՝ բազային տուրքի հնգապատիկի չափով

իգ) անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի դադարման մասին որոշումների, վճիռների, դատավճիռների պետական գրանցման համար՝ բազային տուրքի հնգապատիկի չափով

իդ) հողի մշտական օգտագործման և հողի ու շենքերի, շինությունների վարձակալության իրավունքի դադարման մասին որոշումների, վճիռների, դատավճիռների պետական գրանցում կատարելու համար՝ բազային տուրքի հնգապատիկի չափով

իե) անշարժ գույքից կամ նրա մի մասից սեփականատիրոջ, օգտագործողի հրաժարվելու մասին որոշումների պետական գրանցման համար՝ բազային տուրքի հնգապատիկի չափով

